



**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ**

**ОГАННЕС ХОРИКЯН**

**ОБ АДМИНИСТРАТИВНЫХ  
ДЕЛЕНИЯХ АХЕМЕНИДСКОЙ  
ПЕРСИИ**

**ЕРЕВАН - 2010**

---

**NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**HOVHANNES KHORIKYAN**

**ON THE ADMINISTRATIVE  
DIVISIONS OF ACHAEMENIAN  
PERSIA**

**YEREVAN- 2010**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆՆԵՄ ԽՈՐԻԿՅԱՆ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ  
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

ԵՐԵՎԱՆ - 2010

ՀՏԴ 93/99: 913.1  
ԳՄԴ 63.3 (5 հրամ) + 63.2  
Խ 826

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ  
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ

**Խմբագիր՝ Ա. Վ. Քոսյան**  
*պատմ. գիտ. դոկտոր*

**Գրախոս՝ Բ. Յ. Հարությունյան**  
*պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

**Խորհկյան Հովհաննես**

Խ 826 Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումների շուրջ.-  
Եր.: Հեղինակային հրատարակություն, 2010. - 57 էջ:

Աշխատության մեջ քննարկվում են Աքեմենյան Պարսկաստանի վարչա-  
կան բաժանման և պատմական աշխարհագրության որոշ հիմնահարցեր,  
որոնց պարզաբանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն Աքեմենյան  
պետության, այլև Հին Արևելքի պատմության ուսումնասիրության համար:

Հասցեագրվում է պատմաբաններին, ուսանողներին և ընթերցող լայն  
հասարակայնությանը:

ՀՏԴ 93/99: 913.1  
ԳՄԴ 63.3 (5 հրամ) + 63.2

ISBN 978-9939-9012-1-3

© Հ. Գ. Խորհկյան, 2010 թ.

*Նվիրում եմ Հեղինե և Գևորգ Հարեթի  
Մանուկյանների պայծառ հիշատակին*

**ԵՐԿՈՒ ԽՈՍՔ**

Համաշխարհային քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկի՝ Իրանի պատմական անցյալի նկատմամբ հետաքրքրությունը մեծ է եղել ոչ միայն ուսումնասիրողների, այլև ընթերցող լայն հասարակայնության համար: Իրանի պատմության նկատմամբ հետաքրքրությունը մեծ է եղել նաև հայ ժողովրդի համար, որը հարյուրամյակներ շարունակ իր վրա է կրել իրանական քաղաքակրթության հսկայական ազդեցությունը: Մ. թ. ա. VI-IV դարերը Իրանի հին պատմության՝ Աքեմենյան Պարսկաստանի երկհարյուրամյա գոյության կարևորագույն և փառավոր շրջանն է: Առաջանալով մ. թ. ա. VI դարում՝ Աքեմենյան պետությունը պատմության մեջ առաջին համաշխարհային տերությունն էր, որն իր գոյության երկու դարերի ընթացքում վիթխարածավալ սահմանների մեջ միավորեց զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող տասնյակ ժողովուրդների և երկրների, որոնց պատմական ճակատագրերը սերտորեն միահյուսվեցին և, ըստ էության, Աքեմենյան տերության պատմությունը դարձավ Եգիպտոսից մինչև հյուսիսարևմտյան Հնդկաստան բնակվող ժողովուրդների սեփական պատմությունը: Աքեմենյան Պարսկաստանի պատմությունը շարունակում է մնալ ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Աղբյուրագիտական նյութի նոր մեկնաբանություններն ու նորովի քննությունը շատ հաճախ փոխում են մեր պատկերացումներն Աքեմենյան տերության պատմության շատ ու շատ հարցերում: Այդ իմաստով բոլորովին էլ բացառություն չէ սույն ուսումնասիրությունը, որտեղ փորձ է արվում նոր լույսով անդրադառնալ Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման և պատմական աշխարհագրության որոշ խնդիրներին: Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման սկզբունքի և սատրապական համակարգի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ արտահայտվել են տարբեր կարծիքներ, որոնք ավելի հաճախ ոչ միայն լրացնում են իրար կամ հիմնավորում մինչ այդ եղած տեսակետները, այլև առաջ քաշում սկզբունքորեն այլ

կարծիքներ, որոնք, հայտնվելով գիտական շրջանառության մեջ, կարճ ժամանակում ձեռք են բերում բավականին լայն տարածում: Ուսումնասիրության թեման, ընդհանուր առմամբ, դեռևս հատուկ ուսումնասիրության չի արժանացել: Թեև Աքեմենյան Պարսկաստանի պատմական աշխարհագրությանը նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնց մեջ կան բավականին հիմնարար հետազոտություններ, սակայն Աքեմենյան Պարսկաստանի պատմական աշխարհագրության հարցերը քննվել են հիմնականում այդ պետության վարչական բաժանման սկզբունքից անկախ, ինչը և հանգեցրել է ոչ ընդունելի, առանձին դեպքերում նույնիսկ սխալ եզրակացությունների: Ըստ այդմ էլ, սույն աշխատության մեջ պատմա-աշխարհագրական ճշգրտումները, նույնացումները ուսումնասիրվել են Աքեմենյան տերության վարչական բաժանման սկզբունքի համատեքստում, և փորձել ենք քննել հետևյալ խնդիրները.

*ա) սատրապությունների հերոդոտյան ցուցակը,*

*բ) պարսկական սեպագիր արձանագրությունների սակերի և աշխարհագրական բառակապակցությունների տեղադրությունը,*

*գ) վարչական բաժանման սկզբունքը Աքեմենյան Պարսկաստանում:*

Աշխատությունը գրված է հին պարսկական սեպագիր աղբյուրների, անտիկ հեղինակների աշխատությունների, սեպագրագիտական և այլ ուսումնասիրությունների հիման վրա:

## ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐՈԴՈՏՅԱՆ ՑՈՒՑԱԿԸ

Դարեհ Ա Վշտասպորդին (մ. թ. ա. 522-486 թթ.), հաղթելով իշխանության համար մղված պայքարում և վերականգնելով Պարսից տերությունը, վերջինս բաժանում է 20 սատրապությունների<sup>1</sup>: Սատրապությունների ցանկը պահպանվել է պատմահայր Յերոդոտոսի աշխատությունում<sup>2</sup>, սակայն ցուցակի բաղդատումը, համաձայն որոշ ուսումնասիրողների, անհամապատասխանություն է դրսևորում պարսից արքաների արձանագրություններում հիշատակվող երկրների հերթականությամբ: Խնդիրն այն է, որ սեպագիր արձանագրություններում՝ ի դեմս թվարկվող երկրների, փորձել են տեսնել Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման արտացոլումը: Օրինակ, տարակարծությունների տեղիք կարող է տալ այն հարցը, թե ինչո՞ւ Պարթևստանը, Արեյան, Սոգդը և Խորեզմը ընդգրկված են XVI սատրապության մեջ, երբ արձանագրություններում այդ երկրները հիշատակված են առանձին-առանձին: Այս և այլ անհամապատասխանությունները, բնականաբար, պատճառ կհանդիսանան զգուշությամբ և վերապահությամբ քննելու Յերոդոտոսի տեղեկությունները: Այսպես, հերոդոտյան ցուցակն ընդհանրապես համարվել է Յերոդոտոսին կամ նրա աղբյուր Յեկատեսին հայտնի էթնիկական և աշխարհագրական անունների կամայական հավաքածու<sup>3</sup>: Որոշ ուսումնասիրողներ էլ կարծում են, որ արձանագրություններում թվարկվող երկրները ներկայանում են որպես պատմամշակութային ընդհանրություններ, որոնք միշտ չէ, որ պետք է համա-

1 «Pauly's Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft» (այսուհետև՝ Pauly-Wissowa.-RE), München, 1921, s. v. Satrap, S. 82-188.

2 Յերոդոտոս. Պատմություն իննը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի) (այսուհետև՝ Յերոդոտոս). Երևան, 1986, III, 89-97: Տես նաև Herodotus (with an English translation by A. D. Godley). v. II, Cambridge-Massachusetts-London, 1957, (Loeb Classical Library), p. 116-127.

3 J. Junge. Saka-Studien. Der ferne Nordosten im Weltbild der Antike. Leipzig, 1939, S. 44, 90.

պատասխանեին վարչական բաժանումներին<sup>4</sup>, հատկապես, եթե նկատի ունենանք, որ Բեհիսթունի բարձրաքանդակներում ընդգծված են խռովարար, ինքնակոչ թագավորների ազգագրական նկարագրի առանձնահատկությունները: Կարծիք է հայտնվել նաև, թե Յերոդոտոսը նկարագրել է իր ապրած ժամանակաշրջանի պարսից պետության բաժանումը, որը համընկնում է Արտաքսերքսես Ա-ի կառավարման ժամանակաշրջանին<sup>5</sup>: Բազմաթիվ ուսումնասիրողների ենթադրությամբ, Յերոդոտոսին աղբյուր է ծառայել Յեկատեոսը, չնայած Յերոդոտոսը նույնպես կարող էր կատարել որոշ հավելումներ, ընդ որում՝ Յեկատեոսի կամ Յերոդոտոսի ցուցակի հիմքում ընկած է պարսկական պաշտոնական աղբյուր<sup>6</sup>: Սակայն կա նաև տեսակետ, թե Յերոդոտոսը տվյալ հատվածը շարադրելիս ոչ մի պարսկական պաշտոնական աղբյուր էլ չի ունեցել, այլ օգտվել է Յեկատեոսի երկից և քարտեզից, որտեղ ներկայացված են Ասիան բնակեցրած տարբեր ժողովուրդներ<sup>7</sup>: Ի. Ս. Դյակոնովի կարծիքով, Յերոդոտոսի ցուցակում սատրապությունները թվարկված են նախ Սարական տերությամբ, հետո Աքեմենյան պետությամբ միացնելու հերթականությամբ<sup>8</sup>: Իրանագետ Ե. Յերցֆելդը գտնում է, որ Յեկատեոսը ունեցել է մինչև մ. թ. ա. 514 թ. կազմված սատրապությունների ամբողջական ցուցակի ընդօրինակությունը, իսկ Յերոդոտոսի մոտ ցուցակը ներկայացված է աղճատված, առանձին մեջբերումների տեսքով, չնայած դրանք պարունակում են սատրապությունների պաշտոնական անվանումները և հիմք են տալիս պատկերացում կազմել հեկատեոսյան ցուցակի վերաբերյալ<sup>9</sup>: Բոլոր այս տարակարծությունների պատճառն, անշուշտ, այն է, որ պարսկական պաշտոնական աղբյուրը մեզ չի հասել: Մեր կարծիքով, հարցի լուծման բանալին առկա է հենց պատմահայր Յերոդոտոսի երկում, սակայն, ելնելով քննության շահեկանությունից, նախ ամբողջությամբ մեջբերենք պատմահոր երկի այն հատվածը, որտեղ նկարա-

4 Б. А. Тураев. История древнего Востока. т. II, Л., 1935, с. 138; В. М. Массон. Древнеземледельческая культура Маргианы.-Материалы и исследования по археологии СССР, вып. 73, М.-Л., 1959, с. 148; М. М. Дьяконов. Очерк истории древнего Ирана. Москва, 1961, с. 92.

5 А. Т. Olmstead. History of the Persian Empire. Chicago, 1948, p. 291; В. М. Массон. Նշվ. աշխ., էջ 149; История таджикского народа. т. I, Москва, 1963, с. 206.

6 И. М. Дьяконов. История Мидии. М.-Л., 1956, с. 340 и след.; История таджикского народа, с. 158.

7 F. Altheim. Weltgeschichte Asiens im griechischen Zeitalter, т. I, Halle, 1947, S. 142.

8 И. М. Дьяконов. Նշվ. աշխ., էջ 342 և այլն:

9 E. Herzfeld. The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East. Wiesbaden, 1968, p. 288, 292, 296.



գրվում են Աքեմենյան Պարսկաստանի վարչական միավորները՝ սատրապուքյունները: Այսպես, Յերոդոտոսը գրում է. «Յոնիացիներից, Ասիայի մագնեսյաններից, էոլյաններից, կարիացիներից, լյուկիացիներից և միլյուացիներից ու պամփյուլիացիներից, քանի որ նրանց բոլորի համար սահմանվել էր մեկ ընդհանուր հարկ, ստացվում էր չորս հարյուր տաղանդ արծաթ: Այս էլ Դարեհը հաստատեց որպես **առաջին** (այս և հաջորդիվ ընդգծումները մերն են - Յ. Խ.) նահանգ: Սյուսիացիներից, լյուդիացիներից, լասոններից, կաբալներից և հյուստեններից (ստացվում էր) հինգ հարյուր տաղանդ. այս էլ **երկրորդ** նահանգն էր: Դեպի ներս նավարկելիս աջակողմյան հելլեսպոնտոսցիներից, փռյուզիացիներից, Ասիայի թրակացիներից, պափլագոնացիներից, մարիանդիներներից և սիրիացիներից (ստացվող) հարկը երեք հարյուր վաթսուն տաղանդ. այս նահանգը **երրորդն** էր: Կիլիկեցիները տալիս էին երեք հարյուր վաթսուն սպիտակ ձի, տարվա յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ ձի, և հինգ հարյուր արծաթ տաղանդ, որից հարյուր քառասունը ծախսվում էր Կիլիկյան երկիրը պահպանող հեծելազորի վրա, իսկ երեք հարյուր վաթսունը հասնում էր Դարեհին: Սա **չորրորդ** նահանգն էր: Պոսիդեոն քաղաքից, որը հիմնել է Ամփիարաոսի որդի Ամփիլոքոսը Կիլիկիայի և Սիրիայի սահմանին, մինչև Եգիպտոս ընկած երկիրը, բացի արաբների երկրից, որն ապահարկ էր, ստացվում էր երեք հարյուր հիսուն տաղանդ հարկ: Այս նահանգի մեջ էին ամբողջ Փյունիկիան և Պաղեստինյան կոչված Սիրիան ու Կիպրոսը: Սա **հինգերորդ** նահանգն էր: Եգիպտոսից և Լիբիայի, Կյուլենեի ու Բարկայի՝ Եգիպտոսին հարած մասերից, որոնք ընդգրկված էին Եգիպտական նահանգի կազմում, ստացվում էր յոթ հարյուր տաղանդ, չհաշված Մոյրիս լճի ձկնորսությունից ստացվող արծաթը: Ահա այդ արծաթից և իբրև հարկ վերցվող ցորենից բացի (այդ երկրից) ստացվում էր յոթ հարյուր տաղանդ: Քանզի Մեմփիսի Սպիտակ բերդում հաստատված պարսիկների և նրանց վարձկանների համար վերցվում էր տասներկու բյուր մեդիմնոս ցորեն: Սա **վեցերորդ** նահանգն էր: Սատտագյուտները, գանդարիները, դադիկները և ապարյուտները համատեղ վճարում էին (տարեկան) հարյուր յոթանասուն տաղանդ հարկ: Սա **յոթերորդ** նահանգն էր: Սուսայից և կիսսիեցիների երկրի մնացած մասից վերցվում էր երեք հարյուր տաղանդ: Սա **ութերորդ** նահանգն էր: Բաբելոնից և մնացյալ Ասորեստանից ստացվում էին հազար տաղանդ և հինգ հարյուր ներքինիացված տղաներ. սա **իններորդ** նահանգն էր: Ագբատանան, Մեդիայի մնացյալ մասը, պարիկանիները և օրթուկորյուբանտիները

վճարում էին չորս հարյուր հիսուն տաղանդ. սա **տասներորդ** նահանգն էր: Կասպերը, պավսիկները, պանտիմաթները և դարեյտները, մեկ նահանգ կազմած, վճարում էին երկու հարյուր տաղանդ: Սա էլ **տասնմեկերորդ** նահանգն էր: Բակտրիացիներից մինչև Այգլերի (երկիրը բնակվողները) վճարում էին երեք հարյուր տաղանդ հարկ. սա էլ **տասներկուերորդ** նահանգն էր: Պակտյուկիեից, արմեններից և հարևաններից մինչև Եվթսիյանը ստացվում էր չորս հարյուր տաղանդ. սա **տասներեքերորդ** նահանգն էր: Սագարտիները, սարանգները, թամանները, ուտիները, մյուկերը և Կարմիր ծովում գտնվող կղզիների բնակիչները, որտեղ արքան բնակեցնում էր, այսպես կոչված, տեղահանվածներին, այս բոլորը վճարում էին վեց հարյուր տաղանդ հարկ. սա **տասնչորսերորդ** նահանգն էր: Սակերը և կասպերը վճարում էին երկու հարյուր տաղանդ. սա **տասնհինգերորդ** նահանգն էր: Պարթևները, քորասանները, սոգդերը և արեյները վճարում էին երեք հարյուր տաղանդ. սա **տասնվեցերորդ** նահանգն էր: Պարիկանիները և Ասիայի եթովպացիները վճարում էին չորս հարյուր տաղանդ. սա **տասնյոթերորդ** նահանգն էր: Սատիենների, սասպեյրների և ալարոդների վրա սահմանված էր երկու հարյուր տաղանդ հարկ. սա **տասնութերորդ** նահանգն էր: Մոսքերի, տիբարենների, մակրոնների, մոսսիմյուկների և մարերի վրա սահմանվեց երեք հարյուր տաղանդ (հարկ). սա **տասնիններորդ** նահանգն էր: Իսկ հնդիկները, լինելով մեզ հայտնի ազգերի մեջ բոլորից առավել մեծաթիվ, պարտավոր էին, մյուսների հետ համեմատած, բոլորից առավել հարկ վճարել՝ երեք հարյուր վաթսուն տաղանդ ոսկե ավազ. սա **քսաներորդ** նահանգն էր»: Այսպիսով, Յերոդոտոսի ցուցակում, 20 սատրապությունների կազմում հիշատակվում են Պարսից տերության մեջ մտնող շուրջ 70 էթնոսներ և երկրներ, այն դեպքում, երբ Բեհիսթունի արձանագրությունում թվարկված են 23 երկրներ: Այդ երկրներն են՝ Պարսքը, Էլամը, Բաբելոնիան, Ասուրեստանը, Արաբիան, Եգիպտոսը, այն երկրները, որոնք ծովի մոտ են, Սարդիսը, Յոնիան, Մեդիան, Արմինան, Կապադովկիան, Պարթևստանը, Դրանգիանան, Արեյան, Խորեզմը, Բակտրիան, Սոգդիանան, Գանդարան, Սկյութիան, Սատտագյուտիան, Արախոսիան, Մական<sup>10</sup>: Այս երկրները աշխարհագրորեն լրիվ կան

<sup>10</sup> Տե՛ս «Պարեի Վշտասաի Բիսթունյան արձանագրությունը» (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի). Երևան, 1964, էջ 8; R. Kent. Old Persian. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 119; «Les inscriptions de la Perse achéménide». traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq. Gallimard, Paris, 1997, p.188.

մասամբ համապատասխանում են հերոդոտյան ցուցակի հետևյալ սատրապություններին. Յոնիան համապատասխանում է I, Սարդիսը՝ II սատրապությանը, III սատրապության էթնոսների շարքում սիրիացիների հիշատակումը թույլ է տալիս Կապադովկիան համապատասխան համարել այս սատրապությանը, Ասուրեստանը՝ V, Եգիպտոսը՝ VI, Սատտագյուտիան, Գանդարան՝ VII, Էլամը՝ VIII, Բաբելոնիան՝ IX, Սեդիան՝ X, Բակտրիան՝ XII, Արմինան՝ XIII, Դրանգիանան՝ XIV, Սկյութիան՝ XV, Պարթևստանը, Խորեզմը, Սոգդիանան, Արեյան ամբողջովին՝ XVI, Սական՝ XVII: Պարսքը, որպես ապահարկ երկիր, Յերոդոտոսը չի նշում սատրապությունների թվում<sup>11</sup>: Իսկ «*tyaiy drayahyā*»՝ «այն երկրները, որոնք ծովի մոտ են» արտահայտությունը, մեր կարծիքով, աշխարհագրորեն կարող է համապատասխանել Փոքր Ասիայի հարավարևելյան ավիաներձ անկյունին, ավելի ստույգ Կիլիկիային՝ IV սատրապությանը, և հնարավոր է, նաև Կիպրոսին: Մի առիթով մենք հիմնավորել ենք կասպվրկան նույնացման տեսակետը<sup>12</sup>, և էլնելով Բեհիսթունի արձանագրության այն հիշատակումից, թե Պարթևստանում և Վրկանում ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը հայտարարում է, որ այդ է իր կատարածը Պարթևստանում<sup>13</sup>, նշանակում է, որ Վրկանը մտել է Պարթևստանի կազմի մեջ: Սրանից կարելի է եզրակացնել, որ Պարթևստանը համապատասխանում է նաև XI սատրապության տարածքին (չնայած, որ Դարեհի վարչական վերակառուցումներից հետո այդ նույնացումն արդեն բացառվում է): Նույն տրամաբանությամբ Արախոսիան պետք է հանդես գար ինչ-որ երկրի անվան տակ և այդ երկիրը Սատտագյուտիան է: Դարեհը Սաթագուշը հայտարարում է ապստամբ երկրների թվում<sup>14</sup>, սակայն Սաթագուշի մասին այլ տեղեկություններ չի հաղորդում և, ընդհակառակը, խոսում է Արախոսիայում տեղի ունեցած ապստամբական գործողությունների մասին, որտեղ Վահյազդատան բանակ էր ուղարկել Արախոսիայի սատրապ Վիվանայի դեմ կռվելու համար<sup>15</sup>: Ճիշտ է, Դարեհը Արախոսիայում ապստամբությունը ճնշելուց հետո հայտարարում է, որ այդ է իր կատարածը Արախոսիայում (այսինքն՝

11 Յերոդոտոս, III, 97:

12 Բ. Յարությունյան. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ. «Յանդես ամսօրյա», Վիեննա, 1999, թիվ 1-12, էջ 96-97; Գ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ. ԳՂ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, թիվ 1, էջ 147-157:

13 R. Kent. Նշվ. աշխ., էջ 127:

14 Անդ, էջ 123:

15 Անդ, էջ 127:

կարելի էր սպասել Սաթագուշուն, ինչպես Պարթևստանի դեպքում), սակայն կարելի է ենթադրել, որ Արախոսիան ևս աշխարհագրորեն համապատասխանում է VII սատրապությանը, ինչպես Սատտագյուտիան, Գանդարան, և, ըստ էության, Դարեհը Արախոսիան թողեց այս սատրապության կազմում: Համեմատության համար նշենք, որ Բակտրիան էլ չի հիշատակվում Դարեհի դեմ ապստամբած երկրների շարքում, բայց Մարգիանայում ապստամբությունը ճնշելուց հետո Դարեհը հայտարարում է, որ այդ է իր կատարածը Բակտրիայում<sup>16</sup>: Միաժամանակ, հարկ է նշել, որ Բակտրիայի կազմում հանդես եկող Մարգիանան նույնպես չի հիշատակվում Չերոդոտոսի կողմից: Սակայն նույնացրեցինք XVII սատրապությանը, բայց բացառված չէ, որ Մական համապատասխաներ նաև XIV սատրապության մյուսերին: Մեր քննության համար կարևոր են նաև Չերոդոտոսի հետևյալ տեղեկությունները: Պատմահայրը, նշելով հարկատու ցեղերին ու ժողովուրդներին, գրում է, որ «ահա այս հարկերն էին գալիս Դարեհին Ասիայից և Լիբիայի մի փոքր հատվածից: **ժամանակ անց հարկ է ստացվում նաև կղզիներից ու եվրոպայում մինչև Թեսսալիա** (ընդգծումը մերն է - Յ. Խ.) ապրողներից»<sup>17</sup>: Այս վերջին տեղեկության մեջ «ժամանակ անց»-ը ցույց է տալիս, որ մինչև հունական կղզիների, Թրակիայի ու Մակեդոնիայի նվաճումը, Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներն արդեն կատարված իրողությունն էին, և այդ իրողությունն արտացոլված էր Չերոդոտոսի մոտ պահպանված սատրապությունների ցուցակում: Հունական կղզիները՝ Սամոսը, Լեմնոսը, Քիոսը, նվաճվել են մոտ մ. թ. ա. 517 թ., և մոտավորապես այդ թվականին նվաճվել է նաև Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասը<sup>18</sup>: Մ. Ա. Դանդամանը Դարեհի վարչա-ֆինանսական վերափոխումների թվականը համարում է մ. թ. ա. մոտ 517 թ.<sup>19</sup>: Բեհիսթունի արձանագրությունն ավարտվել է մ. թ. ա. 518 թ.<sup>20</sup>, որտեղ Հնդկաստանը,

<sup>16</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 123, 127:

<sup>17</sup> Չերոդոտոս, III, 96:

<sup>18</sup> М. А. Дандамаев. Политическая история Ахеменидской державы. Москва, 1985, с. 108-109. Ե. Չերցֆելդը Հնդկաստանի նվաճումը թվագրում է մ. թ. ա. 519-518 թվականներին (տե՛ս E. Herzfeld. A new inscription of Darius from Hamadan.- «Archaeological Survey of India. Memoires», №34, Calcutta, 1928, p. 2), իսկ Ա. Թ. Օլմսթեդը՝ մ. թ. ա. 513 թ. (տե՛ս A. T. Olmstead. Նշվ. աշխ., էջ 145): Վ. Վ. Ստրուվեն Հնդկաստանի նվաճումը դնում է մ. թ. ա. 514 թ., 516-515 թթ. արշավանքի նախապատրաստությունն էր (տե՛ս В. В. Струве. Эпюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии. Л., 1968, с. 102):

<sup>19</sup> Աճղ, էջ 282:

<sup>20</sup> М. А. Дандамаев. Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.). Москва, 1963, с. 80.

Մակեդոնիան, Թրակիան հիշատակված չեն: Հնդկաստանը հիշատակվում է **DPe** արձանագրությունում<sup>21</sup>, իսկ **DNa** արձանագրությունում արդեն Հնդկաստանը և Մակեդոնիան ու Թրակիան ընդգրկող Սկուդրա սատրապությունը հիշատակվում են միասին<sup>22</sup>: Սա նշանակում է, որ Դարեհի կողմից Հնդկաստանի նվաճումը ավելի վաղ է տեղի ունեցել, էգեյան ծովի նշված կղզիների հետ միաժամանակ, քանի որ վերջիններս ներկայանում են «Ionians who are of the mainland» արտահայտության տակ (մանրամասն տե՛ս ստորև): Մեր կարծիքով, Նաղշե Ռոստամի արձանագրությունը արտացոլում է Դարեհին հպատակ երկրների ամբողջական պատկերը, և թերևս այս պատկերը հյուսիսմերձսևծովյան սկյութների դեմ Դարեհի կատարած արշավանքին<sup>23</sup> հաջորդած պատմական իրողությունն էր: Իսկ սա արդեն նշանակում է, որ ո՛չ Բեհիսթունի, ո՛չ Նաղշե Ռոստամի և ո՛չ էլ ընդհանրապես մյուս հին պարսկական արձանագրությունները չեն արտացոլում Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգը: Եթե Հնդկաստանը նվաճվել է մ. թ. ա. 517 թ. մոտերքը, այսինքն՝ Բեհիսթունի արձանագրությունը գրվելուց հետո, և արդեն իսկ որպես առանձին սատրապություն առկա է սատրապությունների հերոդոտյան ցուցակում, նշանակում է, որ Դարեհի վարչական վերափոխումներն իրագործվել են մինչև հյուսիսմերձսևծովյան սկյութների դեմ կատարված արշավանքը, քանի որ հենց Հերոդոտոսը, թվարկելով սատրապությունները, վերջում ավելացնում է, որ ժամանակ անց հարկեր են ստացվում նաև կղզիներից և Եվրոպայի մի մասից:

Մ. թ. ա. մոտ 512 թ. Մակեդոնիան և Թրակիան կազմում են մեկ սատրապություն՝ Սկուդրա անվանումով<sup>24</sup>, այն դեպքում, երբ համապետական բնույթի վարչական վերափոխումներն արդեն կատարվել էին: Ավելի ուշ նույնպես տեղի էին ունենում վարչական փոփոխություններ պետության ներսում: Այսպես օրինակ, Դարեհ Ա-ի ժամանակ Փոքր Ասիան բաժանված էր 4, իսկ Դարեհ Գ-ի օրոք՝ 7 սատրապությունների: Դարեհ Ա-ի մահից շատ չանցած Վրկանն անջատվում է Պարթևստանից և վերածվում առանձին սատրապու-

21 R. Kent. Նշվ. աշխ., էջ 136:

22 Անդ, էջ 137:

23 Այս արշավանքը դնում են մ. թ. ա. 516 և 512 թվականների միջև (տե՛ս M. A. Дандамаев. Политическая история Ахеменидской державы, с. 109, 111):

24 M. A. Дандамаев. Նշվ. աշխ., էջ 111 (O. Szemerényi-ն ենթադրում է, որ *Skudra* նշանակում է այն սկյութական ցեղերը, որոնք ապրում էին Մակեդոնիայում կամ Թրակիայում: Տե՛ս O. Szemerényi. Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka. Wien, 1980):

թյան: Մ. թ. ա. մոտ 508 թ. Գանդարան՝ որպես առանձին սատրապություն, անջատվում է Բակտրիայից: Եղել է նաև հակադարձ երևույթը. մ. թ. ա. IV դարում էբիր-նարին և Կիլիկիան միավորվում են մեկ սատրապության մեջ<sup>25</sup>: Հավանաբար, նոր սատրապությունների առաջացումը և հների վերածնունդը չէր ուղեկցվում նոր և համապատասխան համակայսերական հրամանագրերով (կամ էլ այդ հրամանագրերը մեզ չեն հասել) և ուներ տեղական նշանակություն: Այդ իսկ պատճառով հերոդոտյան ցուցակի հիմքում ընկած վարչական վերակազմության վերաբերյալ պաշտոնական աղբյուրը Աքեմենյան արքունիքի կողմից չի ենթարկվել լրացումների և փոփոխությունների, այսինքն՝ Դարեհից հետո հանդես եկող գահակալները չեն ձեռնարկել համապետական մակարդակի վարչական վերափոխումներ: Սակայն, պետք է ուշադրություն դարձնել մի հանգամանքի վրա, որտեղ, ըստ էության, կրկին արտացոլված է Աքեմենյան Պարսկաստանի սատրապական բաժանման պատկերը: Վերջինս, կարծում ենք, իր արտացոլումն է գտել Քսերքսեսի Դելլադա արշավող բանակի նկարագրության մեջ, որի հիմքում, դատելով Դերոդոտոսի տեղեկությունից, ընկած է պարսկական պաշտոնական աղբյուրը, քանի որ, ինչպես հաղորդում է պատմահայրը, Քսերքսեսի հրամանով և ուղղակի ներկայությամբ զրագիրները զրի են առնում արշավանքին մասնակցող բոլոր ազգությունների անունները, որոնք տրամադրել էին ցամաքային և ծովային ռազմական ուժեր<sup>26</sup>: Ստորև ներկայացնենք արշավանքին մասնակցող այն բոլոր ժողովուրդների<sup>27</sup>, որոնք հիշատակված են նաև սատրապությունների ցուցակում և տեսնենք այն փոփոխությունները, որոնք կհայտնաբերվեն քննության ընթացքում: Այսպես, Դերոդոտոսը արևմտյան ժողովուրդներից նախ հիշատակում է պափլագոնացիներին, որոնց նմանությամբ զինված էին լիգիացիները, մատիենները, մարիանդիները, սիրիացիները: Այնուհետև ռազմական առումով փոյուգիացիներն ու արմենները հանդես են գալիս մեկ հրամանատարության ներքո: Լյուդիացիներն ու մյուսիացիները հիշատակվում են Արտափրենեսի հրամանատարության տակ: Ասիայի թրակացիներին առաջնորդում էր Արտաբանոսի որդի

<sup>25</sup> М. А. Дандамаев, В. Г. Луконин. Культура и экономика древнего Ирана. Москва, 1980, с. 111.

<sup>26</sup> Դերոդոտոս, VII, 100:

<sup>27</sup> Անդ, VII, 61-96: Տես նաև Herodotus (with an English translation by A. D. Godley). v. III, Cambridge-Massachusetts-London, 1957 (Loeb Classical Library), p. 374-399.

Բասսակետը: Հետո նշվում են պիսիդիացիները: Կաբալներին ու միլիացիներին առաջնորդում էր Բադրետը, մոսքերին, տիբարեններին՝ Արիոմարդոսը, մակրոններին ու մոսսինոյկներին՝ Արտայուկտետը: Հետևակ զորքի մեջ հիշատակվում են մարերը, կոլխերը, ալարոդները, սասպեյրները, Կարմիր ծովի կղզիաբնակները: Դատելով բանակի նկարագրությունից՝ յուրաքանչյուր ցեղ հիշատակված է ըստ տերության մեջ ունեցած իր նշանակության: Ըստ այդմ էլ, նախ հիշատակված են պարսիկները, այնուհետև մեդացիները, կիսսիացիները, հյուրկանները, ասորեստանցիները, խալդայները: Հաջորդաբար գալիս են բակտրիացիները, սակերը, հնդիկները, արիները, պարթևները, քորասմները, սոգդերը, գանդարները, դադիկները, կասպերը, սարանգները, պակտյուլացիները, ուտիները, մյուկերը, պարիկանիները, արաբները և Եգիպտոսից վերև բնակվող եթովպացիները, հնդիկներին միացված արևելյան եթովպացիները, լիբիացիները: Բանակի հեծելազորը կազմված էր պարսիկներից, պարսիկների կողքին կանգնած սագարտիներից, մեդացիներից, կիսսիացիներից, հնդիկներից, բակտրիացիներից, կասպերից, լիբիացիներից, պարեկանիներից, ուղտեր նստած արաբներից: Նավատորմը կազմված էր փյունիկեցիներից, Պաղեստինի սիրիացիներից, Եգիպտացիներից, կիպրոսցիներից, կիլիկեցիներից, պամփյուլիացիներից, լյուկիացիներից, Ասիայի դորիացիներից, կարիացիներից, հոնիացիներից, կղզիաբնակներից (Էգեյան ծովի - Հ. Խ.), էլիացիներից, հելլեսպոնտոսցիներից: Ըստ Ե. Հերցֆելդի՝ Հերոդոտոսի տեղեկությունները Քսերքսեսի բանակի մասին հիմնված են մի աղբյուրի վրա, որտեղ համատեղվել են մի կողմից ժողովուրդների անունները, ջոկատների թվաքանակը և հրամանատարների անունները պարունակող պարսկական ցուցակը, մյուս կողմից՝ ականատեսների վկայությունները, որոնք տալիս են հագուստի և սպառազինության նկարագրությունը: Քսերքսեսի բանակի մասին տեղեկությունները համեմատելով հարկատու շրջանների ցուցակի և պարսից արքաների արձանագրությունների հետ, որոնք վերաբերում են միջինասիական ժողովուրդներին, տեսնում ենք, որ զորքերի թվարկման մեջ կան որոշ տարբերություններ: Այսպես, վրկանները, որոնք չեն հիշատակվում սատրապությունների ցուցակում, առանձնացված են որպես առանձին ջոկատ, բակտրիացիները միացվել են սակերին, չեն հիշատակվում որոշ ցեղեր: Այս անհամապատասխանությունները կարելի է բացատրել այն փոփոխություններով, որոնք տեղի էին ունեցել մ. թ. ա. շուրջ 480 թ. (օրինակ, ցեղերի անջատվելը, սատրապությունների վերա-

կազմումը և այլն)<sup>28</sup>: Անշուշտ, Քսերքսեսի բանակի մասին տեղեկությունները հիմնված են պարսկական պաշտոնական աղբյուրի վրա, սակայն, ի տարբերություն սատրապությունների նկարագրության, բանակի մասին տեղեկություններում Յերոդոտոսը դրսևորում է որոշ կամայական մոտեցումներ, այսպես ասած, որոշ հաղորդումներում կատարելով հավելումներ և ճշգրտումներ՝ ի ցույց դնելով իր բանիմացությունը: Օրինակ, ըստ պատմահոր, փոյուզիացիներն ու արմենները հանդես են գալիս մեկ հրամանատարության ներքո, ընդ որում, ինչն հաճախ է հանդիպում Յերոդոտոսի մոտ, վերջինս պատմական ակնարկի տեսքով ներկայացնում է փոյուզների, այսպես ասած, նախապատմությունը և շատ արագ անցում կատարում արմեններին՝ նշելով, որ վերջիններս փոյուզիական վերաբնակիչներ էին և զինված էին փոյուզների նման<sup>29</sup>: Յեղիմակի այս տեղեկությանը մի առիթով մենք արդեն անդրադարձել ենք և նշել, որ Կեսարիա-Սաթակի շրջանում հաստատված մուշքերին, որոնք երկար ժամանակ գտնվել են Յայաստանի քաղաքական տիրապետության ծայր արևմուտքում, և որոնց, ըստ պատմահայր Խորենացու, Արամ Նահապետը ստիպել էր սովորել հայերեն և դարձրել իր ժողովուրդը, հունական աշխարհը, իրոք, կարող էր համարել փոյուզիական վերաբնակիչներ, որոնց հետ էին նախ և առաջ շփվել հույները: Յետևաբար, Յերոդոտոսի արմենները հենց այս մուշքերն են, և խոսքը սոսկ պատմական հիշողության մասին է<sup>30</sup>: Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ կա մի հետաքրքիր իրողություն, ինչը թույլ է տալիս կատարել որոշ հետևություններ: Այսպես, այն բոլոր ժողովուրդները, որոնք Յերոդոտոսի կողմից նշված են իբրև Աքեմենյան Պարսկաստանի վարչական համակարգից դուրս գտնվող, այսպես կոչված, ապահարկ երկրներ կամ ցեղեր, Քսերքսեսի բանակում հիշատակվում են իրենց զորամասերով: Այդ ժողովուրդներն են պարսիկները, եթովպացիները, արաբները, կոլխերը: Մեզ համար այս հարցում կարևորն այն է, որ ծայրամասային ցեղերի՝ եթովպացիներ, արաբներ, կոլխեր, հիշատակումով ցույց է տրվում Աքեմենյան Պարսկաստանի սահմանները Քսերքսեսի կառավարման ժամանակաշրջանում:

<sup>28</sup> E. Herzfeld. The Persian Empire, p. 310.

<sup>29</sup> Յերոդոտոս, VII, 73:

<sup>30</sup> Բ. Յարությունյան. Յայաստանի հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դ.դ.). Երևան, 1998: Զմմտ. Գ. Խորիկյան. Սատրապական Յայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում.-«Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲԳ), 2005, թիվ 3, էջ 181:



նում: Քսերքսեսի բանակի նկարագրությունը կարելի է համեմատել նույն թագավորի «Persepolis h» արձանագրության հետ, որտեղ թվարկվում են հետևյալ երկրները. «Māda : Ūja : Harauvatiš : Armina : Zraka : Parθava : Haraiva : Bāxtriš : Sugda : Uvārazmiš : Bābiruš : Aθurā : θataguš : Sparda : Mudrāya : Yaunā : tya : drayahiyā : dārayatīy : utā : tyaiy : paradraya : dārayatīy : Maciyā : Arabāya : Gadāra : Hiduš : Katpatuka : Dahā : Sakā : haumavargā : Sakā : tigraxaudā : Skudrā : Ākaufaciya : Putāya : Karkā : Kūšiya»<sup>31</sup>: Այս արձանագրության համեմատությունը **DNa**-ի հետ, որտեղ Աքեմենյան Պարսկաստանի տարածքն առավել ամբողջական է արտացոլված, բացահայտում է աշխարհագրական երկու նոր անվանումների ի հայտ գալը՝ Ākaufaciya (man of Akaufaka) և Dahā: Ākaufaciya բառի մեջ ā-ն մեր կարծիքով ժխտական նախածանց է, իսկ kaufa-նշանակում է «լեռ, սար» + iyā-ցեղանվանակերտ վերջածանց<sup>32</sup>: Թրակիայի և Լիբիայի միջև հիշատակվող Ākaufaciya-ն տեղադրել հստակ մի վայրում դժվար կլինի: Փորձ է արվել տեղադրել այն XVII սատրապության կազմում՝ Աքեմենյան Պարսկաստանի հարավարևելքում<sup>33</sup>: Մենք առաջարկում ենք այլ տեղադրություն, որը բխում է Չերոդոտոսի տեղեկությունների տրամաբանությունից: Սատրապությունների ցուցակում հիշատակվող մատիենները, սասպեյրները, ալարոդները հանդես են գալիս XVIII սատրապության կազմում, իսկ Քսերքսեսի բանակի նկարագրության մեջ ալարոդները և սասպեյրները միավորված են մեկ հրամանատարության ներքո: Թերևս XVIII սատրապությունը, որն ըստ վերջին ուսումնասիրությունների գտնվել է Կուրից հյուսիս մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթան, արևմուտքում սահման ունենալով Սուրամի լեռները<sup>34</sup>, համապատասխանում է **XPh** արձանագրության Ākaufaciya-ին, որը, մեր կարծիքով, նշանակում է «ոչ լեռնից», այսինքն՝ դաշտային, հարթավայրային երկրի բնակիչ, իսկ ավելի ուշ ժամանակաշրջան-

<sup>31</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 151:

<sup>32</sup> Անդ, էջ 165, 178:

<sup>33</sup> P. Lecoq. Նշվ. աշխ., էջ 138: Ե. Չերոգֆելդը գրում է, որ «the Akōfaçiya lived in southern Lāristān and Kirmān on the Indian Ocean», իսկ մեկ այլ տեղում էլ գրել էր, որ «the Qufs, Kōç, inhabitants of the Bashākird mountains between Hormuz and the Kōh i Bāriç, appear in Xerx. Pers. daiv. as OP. akōfaçiya > kōfiç (qufs) > kōhiç > kōç, from OP. kōfa «mountain», \*kōfaka «mountaineer» (տե՛ս E. Herzfeld. The Persian Empire, p. 300- 301, 365): Ա. Օլմսթեդը Akaufaka-ն (the Mountain Land) տեղադրում է ներկայիս Աֆղանստանում՝ Քաբուլից հյուսիս (տե՛ս A. T. Olmstead. Նշվ. աշխ. էջ 231):

<sup>34</sup> Տե՛ս Բ. Գրորթոնյան. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ.-«Հանդես անսորյա», փեննա, 1999, թիվ 1-12:

նուն հայտնի Աղվանք-Ալբանիան լիովին կարող էր հավակնել նմանօրինակ բնորոշմանը: Եթե *Ākaufaciya* նշանակում է միայն «լեռնցի», ապա նույնիսկ այդ դեպքում մեր տեղադրության սահմանները գրեթե չեն խաթարվի, քանի որ էթնիկական այդպիսի բնութագրման պարագայում կընդլայնվեն մեր առաջարկած տեղադրության աշխարհագրական սահմանները, և *Ākaufaciya*-ի անվան տակ կներկայացնենք Կովկասյան մեծ լեռնաշղթայի ողջ տարածաշրջանում՝ ներառյալ XIX սատրապությունում (ավելի ստույգ՝ արևելյան հատվածում) ապրող ցեղերին, իսկ Կովկասը, ըստ Յերոդոտոսի, Աքեմենյան պետության հյուսիսային սահմանն էր<sup>35</sup>: Եվ տրամաբանական է, որ Կովկասի այս կամ այլ կերպ արտացոլումն արձանագրությունում ամբողջությամբ համապատասխանում է Աքեմենյան Պարսկաստանի վարչական համակարգին վերաբերող մյուս աղբյուրների տեղեկությունների համադրմանը: Ինչ վերաբերում է *Dahā*-ին, ապա սա անտիկ աղբյուրներում հայտնի դահերն են (*Δάαι*, *Δάοι*, *Dahae*)<sup>36</sup>: Ընդունված է դահերին համարել սկյութական ժողովուրդներից մեկը, սակայն չի բացառվում, որ դահերը հենց Յերոդոտոսի հիշատակած պարսկական դայեր ցեղն է, որը հեղինակի կողմից բնորոշվում է վաչկատուն ցեղ<sup>37</sup>: Բնականաբար, այս պարագայում դահերը կարող էին հայտնվել Կասպից ծովի հարավարևելյան ափերին, և թերևս դահերի նախնական բնակության շրջանից հեռու աշխարհագրական այլ միջավայրում հենց հայտնվելն էլ նրանց հիշատակելու պատճառն էր: Քսեռքսեսից հետո Աքեմենյան արքաներին ենթակա երկրները կամ ժողովուրդները հիշատակվում են միայն Արտաքսեսից Բ-ի կամ Գ-ի Պերսեպոլիսի արձանագրությունում, որը մեջբերում ենք ամբողջությամբ. «1 iyam : Pārsa : 2 iyam : Māda : 3 iyam : Ūvja : 4 iyam : Parθava : 8 iyam : Uvārazmiya : 9 iyam : Zrakā : 10 iyam : Harauvatiya : 11 iyam : Ōataguiya : 12 iyam : Gadāraya : 13 iyam : Hiduya : 14 iyam : Sakā : haumavargā : 15 iyam : Sakā : tigraxaudā : 16 iyam : Bābiruš : 17 iyam : Aθuriya : 18 iyam : Arabāya : 19 iyam : Mudrāya : 20 iyam : Arminiya : 21 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yauna : 24 iyam : Sakā : paradraiya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Putāya : 28 iyam : Kūšāya : 29 iyam : Maciya : 30 iyam : Karka :»<sup>38</sup>:

<sup>35</sup> Յերոդոտոս, III, 97:

<sup>36</sup> St u Pauly-Wissowa.-RE, Stuttgart, 1958, s. v. Daai, S. 1945-1946:

<sup>37</sup> Յերոդոտոս, I, 125:

<sup>38</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 155-156: 5-7-րդ տեղերում պետք է հիշատակվեն արեյը, բակտրիացին, սոգդիացին (անդ, էջ 156): St u Gals P. Lecoq. Նշվ. աշխ., էջ 271:

Այստեղ թվարկված երկրները հանդես են գալիս հետևյալ սատրապությունների կազմում, մեղացիները՝ X, էլամացիները՝ VIII, պարթևները, քորասմները, արեյները, սոգդերը՝ XVI, բակտրիացիները՝ XII, սարանգները՝ XIV, մյուկերը՝ կա՛ն XIV, կա՛ն XVII, սատտագյուտները, գանդարիները՝ VII, հնդիկները՝ XX, Aθurā-ն՝ V, բաբելոնացիները՝ IX, եգիպտացիները, լիբիացիները՝ VI, հայերը՝ XIII, կապադովկիացիները՝ III, սարդեսցիները՝ II, հոնիացիները՝ I: Յերոգոտյան ցուցակի 20 սատրապություններից 13-ի առկայությունն այս արձանագրությունում ակնհայտ է, իսկ մնացածների մասին մեր քննությունը հետևյալն է: **A?P** արձանագրությունն ամբողջությամբ համապատասխանում է **DNa** արձանագրությանը և երկրների ու ցեղերի հիշատակության հերթականության չնչին տարբերությամբ կրկնում **DSe**-ն: Անկախ այն հանգամանքից, թե **A?P** արձանագրությունն ո՞ւմ է պատկանել՝ Արտաքսերքսես Բ-ին (մ. թ. ա. 404-358) կամ Գ-ին (մ. թ. ա. 358-338), միանշանակ է, որ նշված երկու տիրակալների ժամանակ էլ Աքեմենյան Պարսկաստանը հայտնվել էր ներքին և արտաքին ծանր կացության մեջ, և նրանց եռանդուն ջանքերի շնորհիվ պետությունը վերականգնում է իր նախկին հզորությունը<sup>39</sup>: Նշված երկու արձանագրությունների աշխարհագրական և քանակական համապատասխանությունը բացատրվում է նրանով, որ և՛ Արտաքսերքսես Բ-ն, և՛ Արտաքսերքսես Գ-ն ակնհայտորեն «իրավունք» ունեին իրենց գործունեությունը համեմատել մեծ նախնի Դարեհ Ա-ի հզորության հետ, քանի որ նրանց օրոք (այդ «իրավունքը» իրավացիորեն յուրաքանչյուրին էլ կարող է վերաբերել) Աքեմենյան Պարսկաստանը շարունակում էր մնալ նախկին սահմաններում:

Այժմ անցնենք մնացած երկրների տեղադրության հարցի քննությանը և տեսնենք, թե տվյալ երկրները ո՞ր սատրապությունների կազմում կարող էին հանդես գալ: Ի սկզբանե պարզ է, որ մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, ինչպես օրինակ XVI սատրապության պարազայում, կարող էին ընդգրկվել մեկ սատրապության մեջ: Arabāya-ի հարցում անհրաժեշտ են պատմա-աշխարհագրական էական ճշգրտումներ: Արաբների երկիրը սատրապությունների ցուցակում հիշատակվում է որպես ապահարկ, այն դեպքում, երբ դատելով Յերոգոտոսի տեղեկություններից՝ արաբները և մյուս, այսպես կոչված, ապահարկ երկրները մտել են պետության մեջ՝ ունենալով որոշակի պարտավորություններ, ինչպես մնացած

<sup>39</sup> Տե՛ս օրինակ Վ. Բայբուրդյան. Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը). Երևան, 2005, էջ 57-58:

ժողովուրդները: Պատմահայրը խիստ որոշակի նշում է, որ արաբները, կոլխերը, եթովպացիները ընծաներ ուղարկում են հարկերից բացի<sup>40</sup>: Քսերքսեսի բանակի նկարագրությունից հստակ երևում է, որ հազիվ թե վերոհիշյալ ապահարկ ժողովուրդների մասնակցությունը հունական արշավանքին բարի կամքի դրսևորում լիներ: Արաբիայի հարցում անտիկ աղբյուրների որոշ տեղեկությունների համադրումը բացահայտում է մի կարևոր իրողություն: Այսպես, Քսենոփոնը «Անաբասիս»-ում հաղորդում է, որ Սիրիայի միջով 50 փարսախս ընթանալով՝ խռովարար բանակը հասնում է Արաքսես գետին<sup>41</sup>, որը Եփրատի ձախակողմյան վտակներից մեկն է, թերևս Խաբուրը: Նախ, այս տեղեկությունից պարզվում է, որ V սատրապությունը՝ Αθουρᾶ-ն, տարածվել է նաև Եփրատի ձախափնյակում, որից հարավ և հարավ-արևելք Արաբիան էր: Իսկ գրքի վերջում էլ, զորավար-պատմիչը, թվարկելով անցած երկրների տիրակալներին, հիշատակում է երկու կարևոր տեղեկություն. Փյունիկիայի և Արաբիայի տիրակալն էր Դեռնեսը, Սիրիայի և Ասսյուրիայի տիրակալը՝ Բելեսյուսը<sup>42</sup>: Սիրիան, Փյունիկիան, Կիպրոսը Դարեհ Ա-ի օրոք կազմել են մեկ սատրապություն, երբ Կյուրոսի ժամանակ՝ մ. թ. ա. 535 թ., Միջագետքը և Անդրգետքը, այսինքն՝ Եփրատից արևմուտք ընկած Սիրիան, Փյունիկիան, Պաղեստինը, կազմել են մեկ նահանգ, որը մոտ մ. թ. ա. 516 թ. բաժանվում է երկու մասի՝ Միջագետք և Անդրգետք (Եփր-նարի), իսկ արդեն մ. թ. ա. IV դարում Անդրգետքը և Կիլիկիան միավորվում են մեկ սատրապության մեջ<sup>43</sup>: Ինչ վերաբերում է Քսենոփոնի վերջին տեղեկությանը, կարելի է ենթադրել, որ մ. թ. ա. V դարի վերջին V սատրապությունը բաժանվել էր երկու հատվածների՝ Սիրիա, Ասսյուրիա և Փյունիկիա, Արաբիա, կամ էլ, ինչը լիովին հնարավոր է, Դեռնեսը եղել է փոխկառավարիչ<sup>44</sup>: Սիրիան և Ասսյուրիան՝ որպես վարչական միավոր, հիշատակվում են նաև Արիանոսի մոտ, համաձայն որի, Գավգամելայի ճակատամարտին Մագեյը առաջնորդում էր «Կոյլե-Սիրիայի և երկու գետերի միջև ընկած Սիրիայի սիրիացիներին» (Σύρουσς δέ τούς τε ἐκ τῆς κοίλης καί οσοι τῆς μεταξὺ τῶν ποταμῶν Συρίας)<sup>45</sup>: Այս

40 Դերոդոտոս, III, 97:

41 Քսենոփոն. Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի). Երևան, 1970, էջ 20:

42 Անդ, էջ 197:

43 М. А. Дандамасв, В. Г. Луконин. Նշվ. աշխ., էջ 111-112:

44 E. Herzfeld. Նշվ. աշխ., էջ 306:

45 Arrian. Anabasis Alexandri (with an English translation by E. Iliff Robson). v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1958-1961 (Loeb Classical Library), III, 8; 11,

տեղեկությունը նշանակում է, որ V սատրապության թերևս ենթա-  
 շրջան հանդիսացող Կոլչե-Սիրիա<sup>46</sup>-Սիրիան (իմա՝ Αθουρά) Աքեմեն-  
 յան տերության անկման պահին դեռևս մնում էր, ինչպես մ. թ. ա. V  
 դարի վերջին, վարչական մեկ միավոր՝ հյուպարքիա: Արաբների  
 մասին պահպանված տեղեկությունները թույլ են տալիս կատարել  
 հետևյալ եզրակացությունները: Այսպես, Յերոդոտոսը հայտնում է,  
 որ Պսամմետիքոս թագավորի օրոք կայազորներ հաստատվեցին  
 եթովպացիների դեմ Ելեփանտինե քաղաքում, արաբների և ասո-  
 ռեստանցիների դեմ՝ Ղափնեում, որը Պելլուսիայում է, և Լիբիայի  
 դեմ՝ Սարեսայում<sup>47</sup>: Մեկ այլ տեղեկության մեջ պատմիչը հաղորդում  
 է, որ արաբների և ասորեստանցիների թագավոր Սանաքարիբը  
 (իմա՝ Սենեքերիմ) արշավում է Եգիպտոս<sup>48</sup>: Մեջբերված երկու  
 տեղեկությունները թույլ են տալիս կատարել երկու հետևություն.  
 արաբները Եգիպտոսի ծայր հյուսիս-արևելքում, Պելլուսիայի շրջա-  
 նում սահմանակցել են Եգիպտոսին, կամ էլ ասորեստանցիների  
 հետ արաբների համատեղ հիշատակվելը ցույց է տալիս, որ խոսքը  
 գնում է ասորեստանցիներից և արաբներից կազմված պետական  
 կազմավորման մասին: Սակայն Յերոդոտոսի մյուս տեղեկություն-  
 ները հնարավորություն են տալիս առաջնությունը տալ առաջին  
 եզրակացությանը, քանի որ պատմահոր մյուս տեղեկություններից  
 պարզվում է, որ արաբներն իրոք Պաղեստինյան Սիրիա կոչված  
 երկրի առափնյա փոքր հատվածում դուրս են եկել Միջերկրական  
 ծով: Համաձայն Յերոդոտոսի՝ Կադյուտիս քաղաքից մինչև Յենյու-  
 սոս քաղաքն ընկած ծովափնյա նավահանգիստները պատկանում  
 են արաբներին<sup>49</sup>: Ընդ որում, Փյունիկիայից մինչև Կադյուտիս  
 քաղաքը պաղեստինյան սիրիացիների երկիրն է<sup>50</sup>: Կադյուտիս  
 քաղաքը համապատասխանում է Գազային, իսկ պաղեստինյան

р. 246, 257. Стену нас Арриан. Поход Александра (перевод с древнегреческого М. Е. Сергеенко). М.-Л., 1962, III, 8; 11. Արիանոս. Ալեքսանդրի արշավանքը.- «Ալեք-  
 սանդր Մակեդոնացի». Երևան, 1987, էջ 97, 101:

<sup>46</sup> Ըստ Ստրաբոնի՝ Կելեսիրիան լայն առումով տարածվում էր մինչև Եգիպտոս և  
 Արաբիա, իսկ նեղ առումով՝ Լիբանանյան և Անտիլիբանանյան լեռների միջև  
 (Տրաբոն. География в 17 книгах (перевод, статья и комментарии Г. А. Стра-  
 тановского). (այսուհետև՝ Տրաբոն), Լ., 1964, с. 699-700):

<sup>47</sup> Յերոդոտոս, II, 30:

<sup>48</sup> Անդ, II, 141:

<sup>49</sup> Յերոդոտոս, III, 5: Տեն նաև Herodotus, III, 5, p. 8-9. Յերոդոտոսի երկի  
 ռուսերեն հրատարակության մեջ թարգմանված է «արաբների թագավորությանը»,  
 ինչը խոսում է արաբների ոչ թե եթնիկական ներթափանցման, այլ ինչ-որ ցեղային  
 իշխանության քաղաքական սահմանների մասին (Геродот. История в девяти книгах  
 (перевод и примечания Г. Стратановского). Л. 1972, с. 139).

<sup>50</sup> Անդ:

սիրիացիները՝ փղշտացիներին: Եգիպտոսի և Սիրիայի սահմանը կազմել է Կասիոն լեռը, որը ձգվել է Սերբոնիս լճի մոտով<sup>51</sup>: Յենյուստսից մինչև Սերբոնիս լիճը Յերոդոտոսը կրկին համարում է սիրիական հողեր<sup>52</sup>: Կասիոն լեռը և Սերբոնիս լիճը Պելուսիայից արևելք՝ որպես Եգիպտոսի մասեր, հիշատակվում են նաև Ստրաբոնի մոտ<sup>53</sup>: Ստրաբոնը նույնպես որոշ դեպքերում Կասիոն լեռը կամ համարում է Փյունիկիայի մաս, կամ էլ Փյունիկիային անմիջականորեն սահմանակից<sup>54</sup>, ինչն, ըստ Երևույթին, պայմանավորված է Ստրաբոնի կողմից ավելի վաղ շրջանից եկող աղբյուրների օգտագործմամբ: Մեկ այլ կապակցությամբ էլ Սիրիայի առափնյա հատվածը համարվել է արաբական երկիր, որը բնակեցրել են սիրիացիները<sup>55</sup>: Սա այն հատվածն է, որը գտնվել է Կադյուտիսի և Յենյուստի միջև: Կադյուտիսի կամ Գազայի մասին հետաքրքիր տեղեկություններ ունի նաև Արիանոսը, համաձայն որի, Գազան Փյունիկիայից Եգիպտոս տանող ճանապարհի վերջին քաղաքն է, անապատի սկզբին, որի կառավարիչ Բատը, հավաքելով վարձկան արաբների, ուժեղ դիմադրություն է ցույց տալիս Ալեքսանդրին: Միևնույն ժամանակ Արիանոսը Գազան համարում է Պաղեստինյան Ասորիքի քաղաքներից մեկը<sup>56</sup>: Ռուփոսը նույնպես գրում է, որ Գազայում մակեդոնացիներին դիմադրում են պարսիկները և արաբները<sup>57</sup>: Ինչպես երևում է Արիանոսի ուղղակի և Ռուփոսի անուղղակի տեղեկություններից, Գազան հանդիսացել է Փյունիկիայի սահմանային քաղաքը, որից հետո Եգիպտոսն էր: Պարզվում է, որ վարչական առումով Պաղեստինյան Սիրիան մտել է Փյունիկիայի մեջ, այն դեպքում, երբ դատելով Յերոդոտոսի սատրապությունների մասին տեղեկություններից՝ Պաղեստինյան Սիրիան նախապես եղել է V սատրապության ենթաշրջաններից մեկը: Ընդ որում, Փյունիկիան և թերևս Արաբիան, ինչպես Քսենոփոնի օրոք, մ. թ. ա. IV դարի վերջերին ևս շարունակում էին մնալ որպես առանձին վարչական միավոր: Ռուփոսի մի

51 Անդ, II, 6; III, 5:

52 Անդ:

53 Страбон, с. 58, 65, 702: Առանձին դեպքերում Ստրաբոնը Սերբոնիս լիճը շփոթում է Մեռյալ ծովի հետ (անդ, էջ 703-704, 707):

54 Անդ, էջ 65, 703:

55 Յերոդոտոս, II, 12:

56 Արիանոս. Ալեքսանդրի արշավանքը, էջ 86-87:

57 Ռուփոս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը.-«Ալեքսանդր Մակեդոնացի». Երևան, 1987, էջ 333: Տես նաև Квинт Курций Руф. История Александра Македонского. Москва, 1963, с. 93; Rufus Curtius Quintus. History of Alexander (with an English transl. by John C. Rolfe). v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1956 (Loeb Classical Library), IV, VI, 21.

տեղեկությունից էլ հայտնի է դառնում, որ Տյուրոս քաղաքի պաշարման ժամանակահատվածում Ալեքսանդրը զորքի մի մասով արշավում է Արաբիա, այն դեպքում երբ Արիանոսի հաղորդումից պարզվում է, որ Ալեքսանդրը արշավանք է կազմակերպում այն Արաբիայի դեմ, որը գտնվում էր Անտիլիբանանյան կոչվող լեռան մոտ<sup>58</sup>: Անտիլիբանանյան կոչվող լեռները գտնվել են Սիդոնի մոտ, որոնք Լիբանանյան լեռների հետ ձգվել են մինչև Արաբական լեռները, որոնք բարձրանում են Դամասկոսյան լեռների վրա<sup>59</sup>: Մեկ այլ տեղում էլ Ռուփոսը հիշատակում է այսպես կոչված Լիբանանյան լեռները, որտեղ վայրի արաբները հարձակվել ու սպանել էին երեսուն մակեդոնացու<sup>60</sup>: Բերված տեղեկությունների համադրումից պարզվում է, որ Արաբիան կամ ավելի ստույգ նրա մի մասը գտնվել է Դամասկոսի հարևանությամբ, ընդ որում, կարելի է եզրակացնել, որ Աքեմենյան Պարսկաստանի համար ստեղծված ժանր կացության պայմաններում արաբները շարունակելով մնալ որպես դաշնակիցներ կամ վարձկաններ, օգնում են պարսիկներին, և միայն Ալեքսանդրի անմիջական ճնշման տակ նրանց այն հատվածը, որը գտնվում էր Դամասկոսից արևելք, ենթարկվում է մակեդոնացիներին: Դամասկոսը Աքեմենյան տերության կարևորագույն քաղաքներից մեկն էր<sup>61</sup>, որտեղ գտնվել է նաև պետական գանձարաններից մեկը: Ռուփոսը Դամասկոսը հիշատակում է որպես Ասորիքի քաղաքներից մեկը, սատրապական նստավայր<sup>62</sup>: Ստացվում է, որ Արաբիան, մեր կարծիքով, տեղադրվում է Պալմիրայի շրջանում, և այս առումով Քսենոփոնի այն տեղեկությունը, թե Կյուրոս Կրտսերի բանակը Արաքսես գետն (հավանաբար Խաբուրն է) անցնելուց հետո ճանապարհը շարունակում է Արաբիայի միջով<sup>63</sup>, սխալ չէ և համապատասխանում է տվյալ ժամանակի իրողությանը: Արաքսես գետից անդին հիշատակված Արաբիան աշխարհագրորեն համապատասխանում է ուշ ժամանակաշրջանի հին հեղինակներից Ստրաբոնի «սկենիտ» կոչված արաբների բնակության տարածք-

<sup>58</sup> Ռուփոս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, էջ 319-320; Արիանոս. Ալեքսանդրի արշավանքը, էջ 79:

<sup>59</sup> Страбон, с. 699.

<sup>60</sup> Ռուփոս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, էջ 319: Այս հատվածում խոսքը գնում է թափառական արաբների մի խմբի մասին, որը հասել էր մինչև Լիբանանյան լեռների շրջանը, չնայած համաձայն Պլուտարքոսի՝ արաբները բնակվում էին Անտիլիբանանյան լեռներում, ինչն ավելի ճիշտ է (տե՛ս Плутарх.-Александр. XXIV.-Избранные жизнеописания. т. II, Москва, 1987):

<sup>61</sup> Տե՛ս օրինակ Արիանոս. Ալեքսանդրի արշավանքը, էջ 68, 73:

<sup>62</sup> Ռուփոս. Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, էջ 295, 310:

<sup>63</sup> Քսենոփոն. Անաբասիս, էջ 20:

ների մասին տեղեկություններին<sup>64</sup>, որոնց ներթափանցումը Եփրատի ձախափնյակ սկսվել էր դեռևս Աքեմենյան դարաշրջանում: Ընդ որում, դատելով Քսենոփոնի որոշ տեղեկություններից, հենց Արաբիայով հույների անցումն էլ պայմանավորել է այն վկայության հիշատակությունը, թե Փյունիկիան և Արաբիան եղել են մեկ վարչական միավոր: Քսենոփոնը նշում է, որ Կիլիկիայի ու Սիրիայի սահմանը այն դարպասն էր<sup>65</sup>, որն ավելի ուշ հայտնի է Ամանոսյան դրունք անունով: Այստեղից Կյուրոսի բանակը հինգ փարսափ շարժվում է մինչև փյունիկեցիներով բնակեցված Մյուրիանդոս ծովափնյա քաղաքը, և փաստորեն ճանապարհի մնացած ուղին մինչև Արաքսես գետը Քսենոփոնը համարում է Սիրիա<sup>66</sup>: Փյունիկեցիների հիշատակումը տվյալ հատվածում միանշանակ հիմք չի կարող լինել այն պնդման համար, թե Փյունիկիայի սահմանը հյուսիսում այդքան ընդարձակվել էր: Սա պարզապես նշանակում է, որ Մյուրիանդոսը փյունիկեցիների կողմից հիմնադրված քաղաք էր Փյունիկիայի սահմաններից դուրս: Ավածից ենթադրում ենք, որ Կյուրոսի բանակը բնավ չի անցել Փյունիկիայով, և հենց Արաբիայի տարածքով անցնելուց հետո միայն Քսենոփոնը հիշատակում է Փյունիկիայի և Արաբիայի կառավարիչ Դեռնեսին որպես մեկ վարչական միավորի տիրակալ: Փաստորեն, հին պարսկական սեպագիր արձանագրությունների Արաբիա երկիրը համապատասխանում է Դամասկոսից արևելք՝ մինչև Եփրատի ձախափնյակ ընկած տարածքին, որը պայմանավորված էր Աքեմենյան արքաների՝ արաբների նկատմամբ տարվող հատուկ քաղաքականությամբ: Արաբների հավատարմությունը պարսից արքաներին, ինչպես տեսանք վերևում, երևաց նույնիսկ պետության կործանման ժամանակաշրջանում: Ընդ որում, այս Արաբիան՝ որպես վարչական միավոր, ուներ իր տնտեսական և ռազմական հստակ պարտավորությունները պետության նկատմամբ, ինչպես մյուս սատրապությունները: Սակայն ըստ էության կար նաև մեկ այլ Արաբիա, որն արաբներ էթնանվան ներքո դաշնակցային հարաբերությունների մեջ էր Աքեմենյան պետության հետ: Այս արաբներին մենք կանվանենք հարավային՝ ի տարբերություն հյուսիսայինի: Վերևում ցույց տվեցինք, որ արաբները Կադյուտիսի և Յենյուսոսի միջև դուրս էին եկել Միջերկրական ծով, ընդ որում արաբների քաղաքական իշխանությունն այդ հատվածում պայմանավորված էր առևտրական նկատառումներով, և թերևս

<sup>64</sup> Страбон, с. 686, 693-694, 708.

<sup>65</sup> Քսենոփոն. Անաբասիս, էջ 17:

<sup>66</sup> Անդ, էջ 18-20:



անմիջական առևտրական հաղորդակցությունը մերձծովյան շրջանից նաբատեական Պետրայի միջոցով շարունակվում էր Արաբական թերակղզու խորքերը: Հենց Կամբյուսեսն էլ Եգիպտոսը նվաճելու համար խնդրում և ստանում է այս շրջանների արաբների թագավորի օգնությունը և անցնելով նրանց երկրով՝ նվաճում Եգիպտոսը<sup>67</sup>: Այս օգնության շնորհիվ էլ արաբները, որոնք ըստ երևույթին նաբատեացիք են<sup>68</sup>, համարվեցին պարսիկների դաշնակիցները և հավանաբար պահպանեցին մինչ պարսիկների կողմից Եգիպտոսի նվաճումն ունեցած առևտրական տիրապետությունը Միջերկրական ծովի առափնյա փոքր հատվածում, ինչը բխում էր նաև Աքեմենյան պետության շահերից: Եվ հենց այս արաբներին նկատի ունի Հերոդոտոսը, երբ նշում է, որ Դարեհին, բացի արաբներից, ենթարկվում էին Ասիայի բոլոր ժողովուրդները, որոնց երկիրը ապահարկ էր<sup>69</sup>: Նկատի ունենալով, որ արևելքում Եգիպտոսի սահմանը հասել է մինչև Սերբոնիս լիճը, կարելի է ընդունելի համարել, որ արաբների իշխանությունը տարածվում էր նաև Սինայի թերակղզու վրա, ընդ որում Յեմյուսոսից մինչև Սերբոնիս լիճը Հերոդոտոսը կրկին աշխարհագրական առումով համարում է սիրիական հողեր, որոնք տվյալ ժամանակում (Կամբյուսեսի Եգիպտական արշավանքի ժամանակ) նույնպես պետք է գտնվեին քոչվոր արաբների վերահսկողության տակ: Բերված տեղեկությունների քննությունից պարզվում է, որ եթե Հերոդոտոսի ժամանակ Փյունիկիան հարավում հասել է մինչև Սերբոնիս լիճը և Կասիոն լեռը, ապա Ալեքսանդրի արշավանքի ժամանակ V սատրապության հարավային սահմանը հասնում էր մինչև Գազա, այսինքն՝ Եգիպտական սատրապությունը հյուսիս-արևելքում ընդարձակվել էր ի հաշիվ հարևան սատրապության տարածքների: Այս բացատրությունն էլ իր հերթին ցույց է տալիս, որ Սինայի թերակղզին կամ գոնե նրա հյուսիսային մասը սկզբում միացված է եղել V սատրապությանը, իսկ հետո թերևս մ. թ. ա. IV դարի երկրորդ կեսերից՝ Եգիպտական սատրապությանը:

<sup>67</sup> Հերոդոտոս, III, 5-9:

<sup>68</sup> Նաբատեացիների մասին մանրամասն տե՛ս Страбон, с. 703, 718, 720, 740:

<sup>69</sup> Հերոդոտոս, III, 88, 91:

**ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԵՐԻ ԵՎ  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ**

Այժմ անցնենք պարսկական սեպագիր արձանագրությունների մեջ հիշատակվող *Sakā-haumavargā*, *Sakā-tigraxaudā*, *Sakā tyaiy paradraya*՝ սկյութների տեղադրության քննությանը: Չներկայացնելով հարցի ուսումնասիրության պատմությունը<sup>70</sup>, սկզբից ևեթ նշենք, որ խնդրո առարկայի պարզաբանումը ուշադիր քննության պարագայում առկա է հենց Չերոդոտոսի երկում: Մի առիթով ցույց ենք տվել Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրությունը<sup>71</sup> և ստորև մեկ անգամ ևս չփորձելով կրկին խորանալ հարցի մանրամասնությունների մեջ, միանգամից դիմենք Չերոդոտոսի աշխատության այն հատվածին, որը թերևս լիովին կօգնի խնդրի պարզաբանմանը: Պատմահայրը և՛ սատրապությունների ցուցակում, և՛ հույն-պարսկական պատերազմներին մասնակցող ցեղերի շարքում հիշատակում է միայն, այսպես ասած, սակերի մի հատվածին, որոնք երկու վկայությունների դեպքում էլ ակնհայտորեն կապված են Միջին Ասիայի հետ<sup>72</sup>: Եվ ամենակարևորը, Չերոդոտոսը միևնույն վկայության մեջ թեև ոչ ուղղակի հիշատակում է (ընդ որում՝ բակտրիացիներից հետո) երկու խումբ սակերի մասին՝ «սրածայր բարձր գդակավոր» և անյուրզյան<sup>73</sup>: Տվյալ տեղե-

<sup>70</sup> Նշված ցեղերի և նրանց տեղադրության տարբեր տեսակետների մասին տես Ա. Доватур, Д. Калистов, И. Шишова. Народы нашей страны в «Истории» Геродота. Москва, 1982 (այսուհետև՝ Д. К. III), с. 392-394, прим. 752.

<sup>71</sup> Յ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 147-157:

<sup>72</sup> Չերոդոտոս, III, 93; VII, 64:

<sup>73</sup> Անդ, VII, 64: Բակտրիացիները և սակերը՝ որպես հարևաններ, հիշատակվում են նաև այլ տեղեկություններում (անդ, I, 153; IX, 113):

կության մեջ չնայած Չերոդոտոսը խոսում է միայն սակ-սկյութների մասին և այն էլ ընդհանրական ձևով, կա որոշակի տարբերակում (ամյուրգյան սակեր), որոնց հետ արտացոլված են նաև հաունմավարգյան սակերը, որոնք իրականում Չերոդոտոսի հիշատակած ամյուրգյան սակերն են, և *tigraxaudā* սակերը, որոնք Չերոդոտոսի այն սակ-սկյութներն են, որոնք նկարագրության մեջ բնութագրվում են նաև իրենց «սրածայր բարձր գդակներով»: Վերևում նշված հողվածուն ցույց ենք տվել, որ XV սատրապության մեջ ներառված սակերը աշխարհագրորեն նույնանուն են Բեհիսթունի և Պերսեպոլիսի (*DPθ*) արձանագրությունների *Sakā* երկրին, որը գտնվել է Յյուսիսային Տաջիկստանի և Ամու-Դարյայի վերին հոսանքի շրջանում՝ հարավում ձգվելով մինչև Հինդուքուշի լեռնաշղթան<sup>74</sup>: Սա հենց այն երկիրն է, որը Դարեհ Ա-ն իր արձանագրություններից մեկում հիշատակում է Սոգդիանայից այն կողմ<sup>75</sup>, այսինքն՝ դեպի արևելք: Ինչ վերաբերում է «անդրծովյան սկյութներին» (*Sakā tyaiy paradraya*), ապա դատելով հին պարսկական արձանագրություններից (*DNa, A?P*)՝ սրանց տեղադրությունն ավելի հստակ է: Հիշատակվելով Հոնիայի և Սկուդրայի միջև՝ «անդրծովյան սկյութները» նույնանուն են եվրոպական սկյութներին<sup>76</sup>:

Ստորև քննության առնենք սկյութների հետ կապված աղբյուրագիտական մեր կարծիքով մի շատ կարևոր տեղեկություն, որը մասնագիտական գրականության մեջ տարբեր բացատրություններ է ստացել: Խոսքը վերաբերում է Դարեհ Ա-ի եգիպտական հիերոգլիֆ արձանագրությանը, որտեղ հիշատակվում են Աքեմենյան Պարսկաստանին ենթակա 24 երկիր, որոնց շարքում 12-րդ տեղում նշվում են «*Les Saka des marais et les Saka des plaines*» (ճահիճների սակեր և հարթավայրերի սակեր)<sup>77</sup>: G. Posener-ը, օրինակ, տիգրախաուդա սակերին նույնացնում էր ճահիճների սկյութների

74 Հ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ 155:

75 R. Kent. Նշվ. աշխ., էջ 137:

76 Այս տեղադրության վերաբերյալ տես նաև R. G. Kent. The Lists of Provinces, «*Journal of Near Eastern Studies*». v. II, 1943 (այսուհետև՝ JNES), p. 304; J. Junge. Saka-Studien. S. 90; E. Herzfeld. Sakastān, «*Archaeologische Mitteilungen aus Iran*», 1932, IV, 1/2, S. 9f.; И. В. Пьянков. Саки (содержание понятия).-Изд. Отделения общественных наук АН ТаджССР, 1968, 3 (53), с. 17: Կա նաև հակառակ տեսակետը, համաձայն որի «անդրծովյան սկյութները» գտնվել են Միջին Ասիայում (տես В. В. Струве. Этноды..., с. 59 և այլն; А. Н. Бернштам. Племенные союзы на Тянь-Шане и Енисее.-В кн. История Киргизии, Фрунзе, 1956, т. I, с. 43):

77 J. Yoyotte. Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte.-«*Journal Asiatique*», t. 260, Paris, 1972, f. 3-4, p. 253-266.

հետ, իսկ ամյուրզյան սկյութներին՝ հարթավայրերի կամ դաշտերի սկյութների հետ<sup>78</sup>: Սակայն տիգրախաուդա և հաունավարգա սակերի հետ նույնացումը, ըստ էության, հիմնավորված չէ, քանի որ թեկուզև նույնիսկ նույն համարի տակ, այդուհանդերձ եգիպտական տվյալ արձանագրության սակերը, դատելով Դարեհ Ա-ի վարչական վերակառուցումների սկզբունքից (այս մասին ստորև), գտնվել են աշխարհագրորեն տարբեր վայրերում<sup>79</sup>: Մենք առաջարկում ենք հետևյալ տեղադրությունը, որը բխում է որոշ աղբյուրների համադրական քննությունից: Այսպես, Յերոդոտոսը հայտնում է, որ «Արաքս գետը բխում է մատիենների երկրից, որտեղից և Գյունդես գետը, որը Կյուրոսը բաժանեց երեք հարյուր վաթսուն ջրանցքների, բաժանվում է քառասուն բերանների, որոնք բլուրը, մեկից բացի, դուրս են գալիս ճահիճների և խրուտների մեջ: Պատմում են, որ այդ ճահճուտներում ապրում են հում ձուկ ուսող մարդիկ, որոնք սովորաբար օգտագործում են փոկի կաշուց պատրաստած հագուստ: Իսկ Արաքսի բերաններից մեկը բաց տեղանքով հոսում է դեպի Կասպից ծով»<sup>80</sup>: Անշուշտ Յերոդոտոսի այս և մյուս տեղեկությունների քննությունը ցույց է տալիս, որ Արաքսի անվան տակ հանդես են գալիս տարբեր գետեր, օրինակ հենց փոկերի մասին հիշատակությունը վկայում է, որ խոսքը գնում է Վուգայի ստորին հոսանքի մասին<sup>81</sup>, սակայն մեջ բերված տեղեկության վերլուծությունից պարզվում է, որ Արաքսը պատմական Օքսոսն է, ներկայիս Ամուրհայան<sup>82</sup>, որի գետաբազուկն ըստ երևույթին Ուզբոյն էր, իսկ Օքսոսի գետաբերանում մեր կարծիքով գտնվել են դահերը, որոնք հիշատակվում են **XPh** արձանագրությունում: Սովորաբար հին աղբյուրները զանազանում են դահերին և մասսագետներին, ընդ որում մինչև Կասպից ծովի արևելյան ափերը հաստատվելը դահերը

<sup>78</sup> G. Posener. La première domination Perse en Égypte. Caire, 1936, p. 54, 184-185.

<sup>79</sup> Այդպես է ենթադրել օրինակ Balcer-ը՝ դաշտերի սակերին նույնացնելով ամյուրզյան սակերին, ճահիճների սակերին էլ տեղադրել է Մետոսի լճի ճահիճների շրջանում (տես J. M. Balcer. Darius' Scythian expedition.-«Harward Studies in Classical Philology», Cambridge (Mass.), 1972, vol. 76, p. 99-132).

<sup>80</sup> Յերոդոտոս, I, 202:

<sup>81</sup> R. Hennig. Der Araxes des Herodot=Wolga.-«Pettermann's Mitteilungen». 1929, II, 7/8, S. 169 f. Արաքսի մասին տարբեր նույնացումների քննությունը տես И. В. Пьянков. Массаеты Геродота.-«Вестник древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1975, №2 с. 65-67.

<sup>82</sup> Այդ մասին տես Գ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ.-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVI, Երևան, 2007, էջ 27:

բնակվել են Կասպից ծովից արևելք: Սակայն, մեր կարծիքով, այդ տարբերությունը պայմանավորված էր ուշ ժամանակաշրջանում դահերի դերի կտրուկ մեծացումով: Այսպես, Ստրաբոնը դահերին, որոնք սկյութական ցեղ են, տեղադրում է Կասպից ծովի արևելյան ափերին՝ վրկաններից հյուսիս կամ էլ Մեոտիսից վերև<sup>83</sup>: Վերջին տեղեկության տակ պետք է ըստ էության նկատի ունենալ Արալյան ծովը, քանի որ դատելով Ստրաբոնի այլ տեղեկությունից՝ ապարն-դահերը եկել են արևելքից՝ նվաճելով Պարթևստանը: Միևնույն ժամանակ նույն տեղեկության մեջ, ինչը կարևոր է մեր հետագա քննության համար, աշխարհագետը նշում է, որ դահերի գտնվելը վերոհիշյալ շրջանում չի ընդունվում շատերի կողմից<sup>84</sup>: Արիանոսի և Ռուփոսի տեղեկությունները դահերի վերաբերյալ պահանջում են առանձին քննություն, քանի որ նրանց տեղեկություններում կան հակասություններ: Երկու պատմիչներն էլ դահերին հիշատակում են Գավգամելայի ճակատամարտում Դարեհ Գ-ի բանակի կազմում, բակտրիացիների հետ ձախ թևում<sup>85</sup>: Արիանոսը հաղորդում է, որ դահերը Տանախից այն կողմ բնակվող ժողովուրդ է<sup>86</sup>: Տանախը նույնանուն է Սիր-Դարյային, այսինքն՝ դահերը բնակվել են գետից հյուսիս: Սակայն հետաքրքիր է, որ հետագա շարադրանքում արդեն Արիանոսը դահերի փոխարեն խոսում է այսպես կոչված աբիամցի սկյութների մասին<sup>87</sup>: Ռուփոսի մոտ նույնպես Տանախը ամբիացի սկյութների և ընդհանրապես բոլոր սկյութների սահմանն էր<sup>88</sup>: Ռուփոսի մեկ այլ տեղեկության մեջ դահերը հանդես են գալիս խորասմների, սակերի, հնդիկների հետ, որոնք կարող էին օգնություն ցույց տալ Բեսին<sup>89</sup>: Հաջորդ տեղեկության մեջ նշվում է, որ Թրատաթերնը, որը խորեզմի կառավարիչն էր, միանալով հարևան մարզի մասսագետներին և դահերին, նույնպես մարդիկ ուղարկեց արքային (իմա՝ Ալեքսանդրին)՝ իր հպատակությունը վկայելու<sup>90</sup>: Այստեղ ակնհայտ է, որ մասսագետներն ու դահերը, ավելի ճիշտ նրանց մի մասը, մինչև Ալեքսանդրին ենթարկվելը եղել են անկախ, ինչպես և անկախ է եղել խորեզմը: Ընդ որում, մասսագետներին և դահերին առավել հավանական է տեղադրել խորեզմից արևմուտք,

<sup>83</sup> Страбон, с. 481, 483, 487.

<sup>84</sup> Անդ, էջ 486-487:

<sup>85</sup> Arr. Anab., III, 11, 3; Curt. IV, 12, 6.

<sup>86</sup> Arr. Anab., III, 28, 8; 10.

<sup>87</sup> Անդ, IV, 1, 1-3:

<sup>88</sup> Curt. VII, 6, 10-12; 7, 1-2; 12.

<sup>89</sup> Անդ, VII, 4, 6:

<sup>90</sup> Անդ, VIII, 1, 8:

քանի որ դեպի արևելք տեղադրելու դեպքում դահերը հանդես կգային ավելի շուտ բակտրիացիների հետ: Այս վերջին ենթադրության համար հիմք կարող են ծառայել Արիանոսի որոշ հաղորդումները: Այսպես, վերջինիս մոտ նշվում է, որ Ալեքսանդրի մոտ եկավ Փարասմանը՝ խորասմների արքան՝ հազար հինգ հարյուր հոգանոց հեծելազորով, և պատմեց, որ ապրում է կոլխերի ու ամազոնուհիների ցեղերի հարևանությամբ և վերջիններիս ու էվքսինյան ծովի մոտ բնակվող ցեղերին հնազանդեցնելու գործում կօգնի արքային<sup>91</sup>: Անշուշտ, խորասմների հարևանությամբ կոլխերի, ամազոնուհիների և Սև ծովի մոտ գտնվող այլ ցեղերի հիշատակությունը խիստ կասկածելի են դարձնում խորասմներին վերաբերող տեղեկության հավաստիությունը: Սակայն հաջորդ պարբերությունը որոշակի հիմք է տալիս մտածելու, որ խորասմները ինչ-որ դիվանագիտական նախաձեռնություն ցուցաբերել են իրենց սահմաններից ոչ հեռու գտնվող Ալեքսանդրի հետ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, քանի որ, ըստ պատմիչի, Ալեքսանդրը Փարասմանի հետ հարաբերությունների կարգավորումը հանձնարարում է Բակտրիայի և հարևան սատրապների կառավարիչ պարսիկ Արտաբազին<sup>92</sup>: Այս ենթատեքստում սխալ է խորասմների թագավորի կամ խորեզմի կառավարչի սեփական անունով (Փարասման, Թրատաթերն) հիշատակվելը: Մեր կարծիքով Թրատաթերնը իրականում համապատասխանում է Արիանոսի կողմից Գավգամելայի ճակատամարտում հիշատակվող պարթևների, վրկանների, տապուրների սատրապ Թրատաթերնին<sup>93</sup>: Յետևաբար, Ռուփոսի վերոհիշյալ տեղեկությունը (VIII, 1, 8) վերանայելու դեպքում, մասսագետների և դահերի տեղադրությունը պարթևներից, վրկաններից, տապուրներից հյուսիս առավել իրական է, քան թե խորեզմից արևելք: Ուրեմն դահերի տեղադրությունը Ուզբոյի (ինա՝ Անու-Դարյայի) ստորին հոսանքում չի հակասում աղբյուրների տեղեկությանը, և նրանց տեղորոշումը հյուսիսային Մերձարալում<sup>94</sup> այնքան էլ վստահություն չի առաջացնում վերոհիշյալ աղբյուրների քննության շրջանակներում: Կամ էլ, ինչն առավել հավանական է, դահերը, ինչպես Աքեմենյան Պարսկաստանի որոշ ցեղեր, օրինակ կասպերը, բաժանված լինելով առանձին ճյուղերի, գտնվել են աշխարհա-

91 Arr. Anab., IV, 15, 4.

92 Անդ, IV, 15, 5:

93 Անդ, III, 8, 4:

94 И. В. Пьянков. К вопросу о маршруте похода Кира II на массагетов.-ВДИ, 1964, №3, с. 124-125.

գրորեն տարբեր շրջաններում, ինչը և պայմանավորել է աղբյուրներում եղած հակասությունները: Սակայն, հարկավ պետք է նկատի ունենալ, որ դահերը՝ որպես քոչվորներ, տվյալ դեպքում թերևս վարձկաններ, կարող էին հիշատակվել Ալեքսանդրի հետ պատերազմում տարբեր վայրերում: Ավելի ուշ դահերն արդեն Ալեքսանդրի բանակում էին<sup>95</sup>: Եվ ընդհանրապես դահերի հիշատակությունը առավել շատ պայմանավորված է Արիանոսի և Ռուփոսի անձնական մոտեցմամբ, քանի որ նրանց ժամանակ դահերը սկյութական ցեղերի մեջ անենահայտնին էին այն առումով, որ նրանցից էր ծագում Պարթևական թագավորության հիմնադիր Արշակը և Ալեքսանդրի հզորությունն անընդհատ ընդգծելու համար շեշտվում է նաև դահերի նկատմամբ հզոր նվաճողի հաղթանակների մասին, այսինքն՝ արևելքում հռոմեացիների գլխավոր թշնամի հանդիսացող Պարթևական թագավորությունը, որը, ըստ Արիանոսի և Ռուփոսի, քաղաքական առումով նույնանուն է դահերին, դատելով պատմությունից, այնքան էլ անպարտելի հակառակորդ չէր:

Չերոդոտոսը հաղորդում է, որ «Կասպից կոչված այս ծովն արևմուտքից սահմանափակվում է Կովկասով, իսկ արևելքում դեպի արևածագ ձգվում է հայացքով անընդգրկելի մի հարթավայր: Այդ հարթավայրի մեծագույն մասը բնակեցնում են մասսագետները, որոնց դեմ Կյուրոսը մտադրվեց արշավել»<sup>96</sup>, այսինքն՝ մեր մեկնաբանության պարագայում դահերը համարվել են մասսագետների՝ տվյալ դեպքում սկյութական (Չերոդոտոսը նշում է, որ ոմանք մասսագետներին համարում են սկյութական ազգ), ցեղերից մեկը կամ էլ դահերը՝ որպես տվյալ տարածաշրջանի բնակիչներ, անհայտ են եղել հեղինակին (թերևս Չերոդոտոսի դայերն են): Ընդ որում, հիշյալ տեղեկության հարթավայրի փոքր մասը մտել է Աքեմենյան տերության՝ ըստ էության XI սատրապության կազմի մեջ, որի հյուսիսային սահմանը թերևս Ուզբոյն էր: Վրկանների հարևանությամբ սակերի գոյության մասին հաստատում է Քսենոփոնը<sup>97</sup>: Ուշ շրջանի հին հեղինակները վրկաններից հյուսիս

<sup>95</sup> Arr. Anab., V, 12, 2. Ըստ Ի. Վ. Պյանկովի՝ դահեր-«պարթևներ» տեղաշարժը Սիր-Պարյայի միջին հոսանքից հյուսիս ընկած շրջաններից դեպի Կասպից ծովից արևելք տարածվող անապատ, ապա նաև Պարթևական թագավորության կազմավորումը ընթացել է երեք փուլով՝ մ. թ. ա. IV դարից-մ. թ. ա. III դարի կեսեր (տես Յ. В. Пьянков. К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию.-«Переднеазиатский сборник». III, Москва, 1979, с. 195, прим. 4):

<sup>96</sup> Չերոդոտոս, I, 204:

<sup>97</sup> Քսենոփոն. Կյուրոպեդիա (թարգմանություն և ծանոթագրություններ Ս. Ս. Կրկյաշարյանի). Երևան, 2000, V, 2, 25:

հիշատակում են դերբիկներից<sup>98</sup>, որն, ըստ էության, պայմանավորված էր սակա-մասսագետական դաշնակցության մեջ այս ցեղի ավելի ուշ ժամանակաշրջանում պայմանավորված վերելքով: Դատելով Կտեսիասի տեղեկություններից և նկատի ունենալով այդ տեղեկություններում տեղ գտած բազմաթիվ հակասական հաղորդումները՝ թվում է, թե դերբիկները, որոնց դեմ արշավում է Կյուրոս Մեծը, գտնվել են սակերի և հնդիկների հարևանությամբ, ընդ որում, դերբիկները մարտի ժամանակ մեծ չափով օգտագործում են փղերից<sup>99</sup>: Անշուշտ, Կտեսիասի տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս մտածել, որ դերբիկների հիշատակությունը սակերի և հնդիկների հարևանությամբ կասկածելի է, քանի որ հեղինակը դերբիկներին շփոթում է կան դիրբերի հետ, որոնք գտնվել են բակտրիացիների և հնդիկների հարևանությամբ և հայտնի էին իրենց խաղաղակեցությամբ<sup>100</sup>, կան էլ դատելով այն հաղորդումից, որ ճակատամարտում Կյուրոսի սպանվելուց հետո պարսիկներին օգնության են շտապում սակերը Ամորգի (իմա՝ ամյուրգյան սակերը) գլխավորությամբ և պարտության մատնում դերբիկներին, կիսում ենք Ի. Վ. Պյանկովի տեսակետն այն մասին, որ դերբիկները Կտեսիասի մոտ Միջին Ասիայի արևմտյան մասի սկյութական ցեղերի անվանումն է և հավանաբար փոխարինում է մասսագետներին<sup>101</sup>: Այս բացատրությունից բխում է այն հետևությունը, որ եթե ուշ

<sup>98</sup> The Geography of Strabo (with an English translation by H. L. Jones). In Eight Volumes, London, 1969 (Loeb Classical Library), XI, 8, 8; 9, 1; XI, 11, 8; Claudii Ptolemaei Geographia. e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus. voluminis primi. pars secunda, Parisiis, 1901, VI, 10, 2; Plinii Secundi C. Naturalis historiae. vol. 1-10, Cambridge-Massachusetts-London, 1950-62 (Loeb Classical Library), VI, 48; Curt. III, 2, 7 և այլ հեղինակներ: Ի. Վ. Պյանկովի կողմից դերբիկների նույնացումը Զերոդոտոսի օրթոկորյուբանտիներին կասկածելի է, քանի որ նույնացումն այնքան էլ հիմնավորված չէ (տե՛ս Ի. Վ. Պյանկով. «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э.-ВДИ, 1965, №2, с. 43):

<sup>99</sup> И. В. Пьянков. Средняя Азия в известиях античного историка Ктесия (Текст, перевод, примечания). Душанбе, 1975, с. 90-91.

<sup>100</sup> Անդ, էջ 89:

<sup>101</sup> Անդ, էջ 6: Մ. Պ. Տոլստովը կարծում է, որ Կյուրոսին հաղթել են դերբիկները (տե՛ս Ս. Ս. Толстов. По следам древнехорезмийской цивилизации. М.-Л., 1948, с. 106): Հին աղբյուրներում տեղեկություններ կան այն մասին, որ Կյուրոսին հաղթել են այլ ցեղեր: Օրինակ, Բերոսոսը հաղորդում է, որ Կյուրոսը կործանվել է դահերի հովիտներում (տե՛ս F. Jacoby. Die Fragmente der griechischen Historiker. Berlin-Leiden, 1923-1958, №680, fr. 10): Հիշատակվում են նաև սկյութները, սակերը, արիացիները (տարբեր աղբյուրների ամբողջական քննությունը տե՛ս Ի. Վ. Пьянков. К вопросу о маршруте похода Кира II на массагетов, с. 115-130. Стéս նաև М. А. Дандамасв. Иран при первых Ахеменидах, с. 115-116):



Ժամանակներում դերբիկները Կասպից ծովի արևելյան ափին բնակվող որոշակի ցեղ էին, ապա Կոտեսիասի մոտ դերբիկները հավաքական ամբողջություն էին, որի մասն էին թերևս կազմում դահերը, այսինքն՝ «ճահիճների սակերը»: Չնայած նշենք, որ այսպիսի մոտեցման պարագայում հենց նույն դերբիկները ևս կարող էին համապատասխանել «ճահիճների սակերին», սակայն դահերի հետ մեր նույնացումը պայմանավորված է այն հստակ տրամաբանությամբ, որ դահերը հիշատակվել են պարսկական սեպագիր արձանագրությունում և պետք է անպայմանորեն իրենց համապատասխան հիշատակությունն այս կամ այն անվանաձևով ունենային այլ՝ տվյալ դեպքում եգիպտական հիերոգլիֆ արձանագրության մեջ: Նույն տրամաբանությամբ և որոշ տեղեկությունների համադրմամբ «դաշտերի սակերն» էլ նույնանուն են *XPh* արձանագրության *Ākaufaciya*-ին: Մենք նշեցինք, որ այնպիսի մի տարածաշրջան, ինչպիսին Կովկասն էր, հազիվ թե տեղ չգտներ պարսկական սեպագիր արձանագրություններում, իսկ Յերոդոտոսի տեղեկությունների քննությունը հաստատում է այդպիսի տեսակետը: Վերևում առաջարկեցինք *Ākaufaciya* անվան երկու մեկնաբանություն, որոնց իմաստային տարբերությունը համենայն դեպս չի ժխտում աշխարհագրական միևնույն կամ գրեթե միևնույն շրջանում առաջարկվող տեղադրությունը: Խնդիրն այն է, որ Յերոդոտոսի մոտ հիշատակվող XVIII և XIX սատրապությունների ցեղերը, որոնք Աքեմենյան տերության մեջ ունեցել են վարչական և ռազմական առումով էական նշանակություն (սատրապական ցուցակ, Քսերքսեսի բանակի կազմը և առանձին տեղեկություններ), զոնե ինչ-որ կերպ, թեկուզև մեկ կամ երկու անգամ, պետք է հանդես գային սեպագիր արձանագրություններում: Յետաքրքիր է նաև, որ Յոնիան եգիպտական նշված արձանագրությունում չի հիշատակվում, սակայն դա չի նշանակում, որ բոլոր պարսկական արձանագրություններում անխտիր հիշատակվող Յոնիան կամ վարչական միավոր, կամ աշխարհագրական հասկացություն գոյություն չունեն: Ուրեմն Այսրկովկասը պարսկական սեպագիր և եգիպտական հիերոգլիֆ արձանագրությունում հիշատակվում է երկու անգամ՝ առաջին անգամ՝ *Ākaufaciya*, երկրորդ անգամ՝ «դաշտերի սակեր» անվանաձևերով: «Դաշտերի սակերին» հստակորեն կարելի է տեղորոշել Կուրի ձախափնյակում, այսինքն՝ XVIII սատրապության կազմում: Ընդ որում, սկյութական էթնոսի գոյությունը տվյալ տարածքում վաղուց արդեն բազմաթիվ աղբյուրագիտական և հնագիտական նյութերի հիմնավորմամբ քաղաքացիություն է

ստացել պատմագիտության մեջ: Ավելի կոնկրետ նույնացմամբ «դաշտերի սակերը» նույնանուն են կոլխերի ու մարերի միջև հիշատակվող սասպեյրներին<sup>102</sup>: Յերոդոտոսի տեղեկությունների քննությունն էլ ցույց է տալիս, որ սասպեյրները եղել են բավականին հայտնի ժողովուրդ, որպեսզի բազմիցս հիշատակվեին պատմահոր կողմից: Ուշագրավ է, որ նույնիսկ Աքեմենյան տերության մայրամուտին XVIII սատրապությունը շարունակում էր մնալ պետության անբաժանելի մասը, և այս առումով ուշադրություն ենք հրավիրում Արիանոսի մի տեղեկության վրա: Ըստ պատմիչի՝ Գավգամելայի ճակատամարտին Ատրոպատեսի հետ էին կաղուսիները, աղվանները և սակեսիները, ընդ որում, մարերն ու կաղուսիները ճակատամարտին հանդես են գալիս առանձին-առանձին դասավորությամբ, իսկ աղվաններն ու սակեսիները՝ միասին<sup>103</sup>: Մասնագիտական գրականության մեջ իրավացիորեն ցույց է տրվել, որ սակեսիների նույնացումը հայկական Շակաշեն գավառի հետ և դրանով իսկ այդ երկրամասը տեսնել Աղվանքի մեջ սխալ է, քանի որ սակեսիների և աղվանների նույն շարքում հիշատակվելը բաժանում է աղվանների բնակեցման տարածքը Սակասենեից և երկու տերմինների նույնացումը հիմնված է միայն հարաբերական համահնչյունության վրա<sup>104</sup>: Ինչ վերաբերում է Պլինիոս Ավագի սակասաններին<sup>105</sup>, ապա սրանք տեղադրվում են Ասեաց փոր գավառում և ոչ մի կապ չունեն Շակաշենի հետ<sup>106</sup>: Սա նշանակում է, որ ինչպես սակ-սկյութների մի հատվածը կարողացել էր հաստատվել Ասեաց փորում, մյուսը՝ Շակաշենում, ապա երրորդն էլ, ելնելով սակեսիների և աղվանների համատեղ հիշատակումից և միասնական հանդես գալուց, հաստատվել էր Կուրի ձախափնյակում: Սակասաններ-Սակասենե-սակեսիներ անվանումները որոշակի հնչյունաբանական տարբերություններով հանդերձ ցույց են տալիս,

<sup>102</sup> Յերոդոտոս, IV, 37, 40; I, 104: Սասպեյրների տեղադրության մասին տես Բ. Գարսեյանյան. Նշվ աշխ., էջ 79-84: Գ. Խորիկյան. Յերոդոտյան սասպեյրների տեղորոշման հարցի շուրջ. Գանրապետական գիտական նստաշրջան: Նյութերի ժողովածու, Գյումրի, 2008, էջ 138-142:

<sup>103</sup> Arr. Anab., III, 8, 4; 11, 4.

<sup>104</sup> А. Акопян. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987, с. 13. Շակաշենի նույնացումը սակեսիների հետ սխալ է համարում նաև Գ. Սվազյանը (տես Գ. Ս. Սվազյան. Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ). Երևան, 2006, էջ 101-103):

<sup>105</sup> Plinii Secundi C. Naturalis historiae, VI, 11, 29:

<sup>106</sup> Բ. Գ. Գարսեյանյան. Մեծ Բայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի. Երևան, 2001, էջ 98-99:

որ սրանց մեջ սակ-սկյութների անվանման առկայությունն ան-  
 ժխտելի է: Սակեսիները աշխարհագրորեն տեղորոշվում են XVIII  
 սատրապությունում, որտեղ կար սկյութական մեծ գաղթականու-  
 թյուն, ընդ որում, ավելի լայն առումով սակեսիներին նույնացնում  
 ենք սասպեյրների հետ, իսկ այս նույնացումը ցույց է տալիս, որ  
 Աբենենյան պետության մայրամուտին սատրապության սահման-  
 ները փոփոխության չէին ենթարկվել<sup>107</sup>: Հետևաբար քննություն չի  
 բռնում նաև այն ուսումնասիրողների տեսակետը, որոնք փորձում են  
 XV սատրապությունը տեղադրել Այսրկովկասում՝ փորձելով  
 սակերին տեղորոշել Սակասենեի տարածքում, այսինքն՝ Գանձակ  
 (ներկայումս՝ Գյանջա) քաղաքի շրջակայքում<sup>108</sup>:

Այժմ անցնենք հին պարսկական սեպագիր արձանագրություն-  
 ներում բազմիցս հիշատակվող աշխարհագրական բառակապակ-  
 ցությունների քննությանը, որը կարևոր նշանակություն ունի պետու-  
 թյան վարչական ընդհանուր կացության պարզաբանման համար:  
 Ստորև ներկայացնում ենք աշխարհագրական այդ հասկացություն-  
 ները՝ ըստ տարբեր արձանագրությունների և Ռ. Քենթի ուղղակի  
 քարգմանության. **DB**...Egypt, (those) who are beside the sea, Sar-  
 dis, Ionia, Media, Armenia, Cappadocia, Parthia... «Mudrāya : tyaiy  
 drayahyā : Sparda : Yauna : Māda : Armina : Katpatuka : Parθava : ...»:  
**DPe**...Armenia, Cappadocia, Sardis, Ionians who are of the mainland  
 and (those) who are by the sea, and countries which are across the  
 sea; Sagartia... «...Armina : Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy :  
 uskahyā : utā : tyaiy : drayahyā : utā : dahyāva : tyā : para : draya :  
 Asagarta : ...»: **DNa**...Armenia, Cappadocia, Sardis, Ionia, Scythians  
 who are across the sea, Skudra, petasos-wearing Ionians, Libyans...  
 «...Armina : Katpatuka : Sparda : Yauna : Sakā : tyaiy : paradraya :  
 Skudra : Yaunā : takabarā : Putāyā : ...»: **DSe**...Armenia, Cappadocia,  
 Sardis, Ionians, (those) who are by the sea and (those) who are

107 Ի. Պյանկովը մարական սատրապության օրթոկորյութանտիների նույնա-  
 ցումը այսրկովկասյան սակեսիների հետ (տես Ի. Մ. Дьяконов. История Мидии,  
 с. 248, 447) համարում է սխալ և օրթոկորյութանտիներին նույնացնում դերբիկների  
 հետ, որոնք բնակվել են Կասպից և Արալյան ծովերի միջև, չնայած Մարաստանի հետ  
 տարածքային առումով անմիջականորեն չեն սահմանակցել (տես Ի. В. Пьянков.  
 «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до  
 н. э., с. 43, 49): Օրթոկորյութանտիներին համարել են նաև թրակա-փոյուզիական  
 ցեղ և տեղադրել են Մարաստանի տարածքում (տես Ս. Պետրոսյան. Հին Մարաս-  
 տանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին.-ՊԲՀ, 1979, թիվ 4, 46-58):

108 XV սատրապության տեղադրության մասին մանրամասն տես Դ. Խորիկյան.  
 Աբենենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ, էջ  
 147-157:

across the sea, Skudra, Libyans... «...Armina : Katpatuka : Sparda : Yaunā : tyaiy : drayahyā : utā : tyaiy : paradraya : Skudra : Putāyā : ...»: **D<sup>Sm</sup>**...Sardis, Ionia, Media, Armenia, Cappadocia, Parthia...Sind, Skudra, petasos-wearing Ionians... «...Sparda : Yauna : Māda : Armina : Katpatuka : Parθava...Hiduš : Skudra : Yaunā : takabarā : ...»: **X<sup>Ph</sup>**...Sardis, Egypt, Ionians, those who dwell by the sea and those who dwell across the sea, men of Maka... «...Sparda : Mudrāya : Yaunā : tya : drayahiyā : dārayatīy : utā : tyaiy : paradraya : dārayatīy : Maciyā : ...»: **A<sup>7P</sup>**...This is the Armenian. This is the Cappadocian. This is the Sardinian. This is the Ionian. This is the Scythian across the sea. This is the Skudrian. This is the Petasos-Wearing Ionian. This is the Libyan... «... 20 iyam : Arminiya : 21 iyam : Katpatuka : 22 iyam : Spardiya : 23 iyam : Yaunā : 24 iyam : Sakā : paradrāya : 25 iyam : Skudra : 26 iyam : Yauna : takabarā : 27 iyam : Putāya : ...»<sup>109</sup>: Մեջքերված տեղեկություններում կա մի կարևոր հանգամանք, ինչը և ուշադիր քննության պարագայում հնարավորություն է տալիս հստակորեն տեղադրել խնդրո առարկա աշխարհագրական հասկացությունները: Հարցն այն է, որ այդ հասկացությունները հիշատակվում են որոշակի աշխարհագրական հերթականությամբ, ընդ որում, հերթականությունը գրեթե անխախտ է մնում, ինչը սովորաբար պարսկական սեպագիր արձանագրություններում խստորեն չի պահպանվում: Այսպես, վերևում ցույց տվեցինք, որ Բեհիսթունի արձանագրության «(those) who are beside the sea»<sup>110</sup> աշխարհագրորեն նույնանուն են Կիլիկիային և Կիպրոսին: Կարծում ենք, որ **D<sup>Pe</sup>** «(those) who are by the sea» նույնպես տեղորոշվում է Կիլիկիայի և թերևս Կիպրոսի տարածքներում, ընդ որում, նման եզրակացության մեզ մղում է այն հանգամանքը, որ երկու արձանագրություններում Կարիայի բացակայությունը<sup>111</sup> թույլ է տալիս Կարիան և նրանից արևելք ընկած Լյուկիան ու Պանփյուլիան ևս ընդգրկել աշխարհագրական այդ ընկալման մեջ: Բնականաբար

<sup>109</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 119, 136, 138, 142, 145, 151, 156:

<sup>110</sup> Գ. Նալբանդյանի մոտ թարգմանված «այն երկրները, որ ծովում են» (տե՛ս Ղարեհ Վշտասի Բիսեթունյան արձանագրությունը, էջ 8), ենթադրել է տալիս, որ խոսքը կղզիների մասին է (հունական կամ թերևս Կիպրոսը), բայց Բեհիսթունի արձանագրությունում հունական կղզիների մասին դեռևս չէր կարող խոսք լինել, իսկ Կիպրոսը հազիվ թե առանձին հիշատակվեր, ընդ որում, երբ խոսքը գնում է երկրների մասին: Եվ ընդհանրապես Բեհիսթունի արձանագրության այլ թարգմանություններում ևս կարդում ենք «այն երկրները, որ ծովի մոտ են» (տե՛ս օրինակ՝ Хрестоматия по истории Древнего Востока (под редакцией В. В. Струве и Д. Г. Редера). Москва, 1963, с. 358; М. А. Дандамаев. Նշվ. աշխ., էջ 262):

<sup>111</sup> **D<sup>Na</sup>**-ում կարիացիներն արդեն հիշատակվում են:

Կիլիկիայի և Կիպրոսի ներգրավումը Կարիայի, Լյուկիայի, Պամփուլիայի հետ միասին աշխարհագրական նման սահմանների մեջ, ցույց է տալիս, որ այս հիշատակությունը նախորդել է Դարեհի վարչական վերափոխումներին, քանի որ I սատրապության մի մասի և IV-ի ներառումը աշխարհագրական միևնույն սահմանման մեջ չի համապատասխանում Դարեհի վարչական համակարգի մասին պահպանված տեղեկություններին: Ինչ վերաբերում է **DPe** հոնիացիներին, ապա սրանք հստակորեն համապատասխանում են Փոքր Ասիայի և Էգեյան ծովի պարսկահպատակ հույներին<sup>112</sup>, իսկ «անդրծովյան երկրները» տեղադրվում են Թրակիայում, Մակեդոնիայում և Դանուբի գետաբերանի շրջանում: Մյուս արձանագրություններում արդեն կան տեղագրական որոշակի սահմանազատումներ: Այսպես, **DNa**-ում առանձին հիշատակված հոնիացիներին հաջորդում են անդրծովյան սկյութները, իսկ վերջիններիս հաջորդում են Սկուդրա երկիրը<sup>113</sup> և սաղավարտակիր կամ վահանակիր հույները (petasos-wearing Ionians)<sup>114</sup>: Տվյալ հիշատակությունը գնում է ըստ աշխարհագրական հերթականության՝ արևելքից արևմուտք: Այս արձանագրության մեջ բերված հատվածի վերաբերյալ աշխարհագրական մեր նույնացումները հետևյալն են: Հոնիացիները համապատասխանում են մայրցամաքի և կղզիների հույներին, «անդրծովյան սկյութները» տեղադրվում են հոնիացիների և Սկուդրայի միջև՝ Դանուբի գետաբերանի շրջանում, իսկ Սկուդրան տարածվում էր Թրակիայի և Մակեդոնիայի տարածքներում: Սաղավարտակիր կամ վահանակիր հույները տեղադրվում են Էգեյան ծովի հյուսիսային

<sup>112</sup> O. Szemerényi-ի մոտ (տե՛ս O. Szemerényi. Նշվ. աշխ., էջ 11) հենց այդպես էլ քարգմանված է «the Ionians of the land (i. e. Asia Minor) and the sea (i. e. the islanders)», սակայն, մեր կարծիքով, կղզիաբնակ հույները սույն հատվածում ուղղակիորեն արտացոլված չեն և հանդես են գալիս առաջին բառակապակցության մեջ:

<sup>113</sup> Անունը ծագում է մակեդոնական Scudra (Plin. IV, 34; Ptol. III, 12) քաղաքի անունից:

<sup>114</sup> Այս հույները նույն արձանագրություններում հիշատակվում են նաև «Ionian with shield on head» և «this is the shield-bearing Ionian» (տե՛ս Persepolis, Takht-I-Jamshid. (by Ali-Sami). 5<sup>th</sup> ed., Shiraz, 1967, p. 41, 83): Պերսեպոլիսի ապադանայի սանդուղքի բարձրաքանդակներից մեկում պատկերված են Թրակիայի և արևելյան Մակեդոնիայի բնակիչները, որոնք արքային բերում են վահաններ, նիզակներ և ձի (անդ, էջ 33), այսինքն՝ վահանների պատկերումը թույլ է տալիս մտածել, որ վահանակիր հույների՝ որպես Սկուդրա սատրապության ժողովուրդներից մեկի տեղորոշումը Էգեյան ծովի հյուսիսային ափամերձ շրջանում լիովին արդարացված է: **DNa**-ի Yaunā takabarā-ն (ըստ Ռ. Քենթի = **DB** և **DPe** tyaiy drayahyā, որը, մեր կարծիքով, ճիշտ չէ) արքայերեն տարբերակում ունի «the second Ionians, who wear shields on their heads» քարգմանությունը (տե՛ս R. G. Kent. The Lists of Provinces, էջ 305, ծնթ. 15):

ափերին<sup>115</sup>: Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա: Կարծում ենք, որ վարչական առումով և՛ «անդրծովյան սկյութները», և՛ սաղավարտակիր կամ վահանակիր հույները մտել են Սկուդրա սատրապության մեջ, ընդ որում, պարսկական սեպագիր արձանագրություններում մի քանի երկրներ կարող էին հիշատակվել կողք-կողքի, այն դեպքում, երբ վարչականորեն կազմում էին մեկ ամբողջություն. օրինակ՝ պարթևները, քորասները, արեյները, սոգդերը հիշատակվում են արձանագրություններում և միաժամանակ հանդես են գալիս XVI սատրապության կազմում: Հերոդոտոսը, նկարագրելով Աբեմենյան տերության վարչական բաժանումը, վերջում ավելացնում է, որ որոշ ժամանակ հետո հարկատու են դառնում նաև կղզիներում և Եվրոպայում մինչև Թեսսալիա ապրողները<sup>116</sup>, այսինքն՝ Թրակիան, Մակեդոնիան, «անդրծովյան սկյութները», սաղավարտակիր կամ վահանակիր հույները և Եգեյան ծովի պարսկահպատակ կղզիները: Սա նշանակում է, որ մինչև նշված շրջանների նվաճումը սատրապությունների ցուցակն արդեն գոյություն ուներ, այսինքն քաղված էր Հեկատեսից և վարչական վերափոխումն էլ արդեն կատարված իրողություն էր: Համենայն դեպս ոչինչ չի խանգարում, եթե Սկուդրա սատրապությունը համարենք XXI վարչական միավորը: Աշխարհագրական այս նույնացումները **DSe**-ում անվանական առումով որոշակի փոփոխություններ են կրում: Հոնիացիները, ինչպես և Սկուդրան, մնում են իրենց տեղերում, իսկ դատելով վահանակիր հույների բացակայությունից՝ սրանց համապատասխանում են «(those) who are by the sea», իսկ «(those) who are across the sea» նույնանում են «**DNa** անդրծովյան սկյութներին»: **DSm**-ում աշխարհագրական հերթականությունը գրեթե պահպանված չէ: Հոնիան հիշատակվում է Սարդեսի ու Մեդիայի միջև, իսկ Սկուդրան և «petasos-wearing Ionians»՝ Հնդկաստանից հետո: **XPh**-ում աշխարհագրական հերթականությունը նույնպես խստորեն պահպանված չէ: Հոնիացիները հանդես են գալիս Եգիպտոսից հետո, որից առաջ նշված է Սարդեսը: Հոնիացիներից հետո հիշատակվող «those who dwell by the sea» նույնանում են **DSe** «those who are by the sea», այսինքն՝ սաղավարտակիր կամ վահանակիր հույներին, իսկ «those

115 М. А. Дандамаев. Политическая история Ахеменидской державы, с. 111: Ե. Հերցֆելդն իր աշխատություններից մեկում վահանակիր հույներին տեղադրել է Մակեդոնիայում (տես E. E. Herzfeld. Archaeological History of Iran. London, 1935, էջ 112-ին հաջորդող քարտեզը):

116 Հերոդոտոս, III, 96:

who dwell across the sea» «անդրծովյան սկյութներն» են: Սկյութրան էլ հայտնվել է աշխարհագրական բուրրովին այլ միջավայրում՝ տիգրախաուդա սակերի և *Ākaufaciyā*-ի միջև: Ինչպես երևում է, Աքեմենյան տիրակալների համար ոչ միշտ է թվարկվող երկրների աշխարհագրական հերթականությունն իրենց արձանագրություններում խստորեն պահպանելը առանձնապես կարևորություններկայացրել: Իսկ օրինակ *A?P*-ում և՛ աշխարհագրական հերթականությունը, և՛ անունների հիշատակությունը լիովին համապատասխանում են *DNa*-ին:

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆՈՒՄ

Վերևում նշեցինք, որ Ի. Մ. Դյակոնովի կարծիքով, պատմահայր Չերոդոտոսի ցուցակում սատրապությունները թվարկված են նրանց՝ Մարական, այնուհետև Աքեմենյան տերությանը միացնելու հերթականությամբ<sup>117</sup>: Նրա համոզմամբ I-XII սատրապությունները առաջ են տարվել Չոնիան առանձնացնելու համար, և այս խումբը պետք է հաջորդեր XIII-XVII (կամ XVIII) սատրապություններին: Սակայն կարծում ենք, որ արևմտյան սատրապություններին և առաջին հերթին փոքրասիական սատրապություններին վարչական տեսանկյունից նախապատվություն տալը պայմանավորված էր ոչ միայն այդ երկրների համար խորթ պարսկական տիրապետության ամրապնդման մտահոգությամբ, այլև ռազմավարական տեսանկյունից ավելի հեռուև գնացող ծրագրերով, որոնք երկար սպասեցնել չտվեցին: Հաստատելով իր նախորդների տիրապետությունների սահմանները և իր հերթին նույնպես ընդլայնելով կայսրության սահմանները՝ Դարեհ Ա-ն՝ որպես հեռատես պետական գործիչ, լավ էր հասկանում, որ պարսից տիրապետության ամրապնդման հեռանկարները Փոքր Ասիայում, Թրակիայում, Էգեյան ծովի կղզիներում անկայուն կլինեն այնքան ժամանակ, քանի դեռ Բալկանյան թերակղզու հույները կպահպանեն իրենց քաղաքական ազատությունը: Այս էր պատճառը, որ Դարեհը վարչական վերափոխումները նախ և առաջ սկսեց արևմտյան Փոքր Ասիայում, քանի որ այս շրջանները պետք է հանդիսանային այն սկզբնական ամրակետը, որտեղից սկսվելու էր պարսից արտաքին քաղաքական ծավալման նոր փուլը՝ սկզբում դեպի սևծովյան սկյութական տարածությունները, այնուհետև՝ Բալկաններ: Եվ շատ չանցած՝ մ. թ. ա. 499 թ. հունիա-

---

<sup>117</sup> И. М. Дьяконов. С2վ. աշխ., էջ 342 և այլն: Ջ. Քամերոնի կարծիքով, խոսքը ոչ թե սատրապությունների ցուցակի մասին է, այլ թվարկվում են սոսկ հպատակ ժողովուրդները (տես G. G. Cameron. The Persian satrapies and related matters.- JNES, v. 32, 1973, №1-2, p. 47-56).



կան ապստամբությունը ցույց տվեց Դարեհի քաղաքական հեռատեսությունը: Վարչական վերափոխումները Փոքր Ասիայից սկսելը պայմանավորված էր նաև մի շատ կարևոր համագամաքով, այն է՝ Բեհիսթունի արձանագրությունում եփրատից այն կողմ՝ արևմուտք ընկած ոչ մի երկիր չի հիշատակվում Դարեհի դեմ ապստամբած մյուս երկրների շարքում, ինչը և զգալիորեն պայմանավորել է, որ ապստամբությունների ճնշումից հետո վերափոխումները սկսվեին համենատաքար կայուն այդ տարածքներից<sup>118</sup>: Այս համատեքստում հետաքրքիր է Բ. Հարությունյանի այն տեսակետը, թե սատրապությունների թվարկման հերթականությունը պայմանավորված է նրանց ձևավորման ժամանակագրական հերթականությամբ: Համաձայն այդ տեսակետի՝ սատրապությունների կազմավորումը ժամանակագրական հերթականությամբ բաժանվում է հինգ փուլերի. ա) I-VI սատրապությունները, բ) VII-XI սատրապությունները, գ) XII-XIII սատրապությունները, դ) XIV-XVII սատրապությունները և ե) XVIII, XIX, XX սատրապությունները<sup>119</sup>: Ժամանակագրական փուլերի առանձնացումը ցույց է տալիս, որ աշխարհագրական հերթականությունը ցուցակում գրեթե պահպանված չէ, քանի որ այս կամ այն սատրապությունը տվյալ աշխարհագրական միջավայրից (օրինակ՝ արևմուտքից) անմիջապես թռիչք է կատարում Միջին Ասիա և, ընդհակառակը, արևելյան շրջաններից՝ դեպի հարավ: Աշխարհագրական հերթականությունը պահպանվում է VIII-XI, XV-XVI, XVIII-XIX սատրապությունների պարագայում: Եվ ընդհանրապես, ինչպես պարսկական սեպագիր արձանագրություններում թվարկվող երկրները, այնպես էլ սատրապությունները թվարկվում են ոչ խիստ ընդգծված աշխարհագրական հերթականությամբ: Մեր կարծիքով, սատրապությունների ձևավորման նման ժամանակագրական պայմանականությունը բացատրվում է այն քաղաքականությամբ, որը Դարեհ Ա-ն իրականացրեց ապստամբ երկրների նկատմամբ, որպեսզի հնարավորինս կանխի հետագա խռովությունները պետության դեմ: Վերը նշեցինք, թե ինչով էր պայմանավորված նախ կայսրության արևմտյան հատվածում (I-VI սատրապություն-

118 Հերոդոտոսը հաղորդում է, որ Դարեհի համար ծանր ժամանակներում Փռյուզիայի, Լյուդիայի, Հոնիայի սատրապ Օրոյտեսը չի օգնում արքային և զբաղված էր չարագործություններ կատարելով (Հերոդոտոս, III, 120-128), սակայն Օրոյտեսի վերաբերմունքը Դարեհի նկատմամբ չի վերածվում բացահայտ զինված անհնազանդության և շուտով գահի վրա անրապնդված Դարեհի հրամանով Օրոյտեսը սպանվում է:

119 Բ. Հարությունյան. Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ, էջ 49-53:

ները) վարչական վերափոխումների իրականացումը: Մեր համոզմամբ, կայսրության համեմատաբար խաղաղ շրջաններում սատրապությունների ձևավորումից հետո պարսից արքունիքի ուշադրությունը կենտրոնանում է արդեն այն երկրների վրա, որոնք չէին ընդունել Դարեհի թագավորական իշխանությունը և ապստամբել էին նրա դեմ: Այսպես, VI սատրապությունից հետո հանդես եկող սատրապություններն ուղղակի կամ անուղղակի եղել են կամ որպես ապստամբ երկրներ, կամ էլ պատերազմական գործողությունների թատերաբեմ: VII սատրապության մեջ, ի թիվս այլ ժողովուրդների, հիշատակվում են նաև սատտագյուտները, իսկ Բեհիսթունի արձանագրությունում Դարեհը Սաթագուշը հայտարարում է ապստամբ երկիր՝ չնայած արձանագրության հետագա շարադրանքում ավելի ստույգ տեղեկություններ չի տալիս<sup>120</sup>: Բեհիսթունի արձանագրության պարսկերեն տեքստում (նաև էլամերեն տարբերակում) Դարեհը Արախոսիայում Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո հայտնում է, որ այդ էր իր կատարածը Արախոսիայում<sup>121</sup>: Սակայն արձանագրության աքքադերեն տարբերակում Դարեհը, խոսելով նույն իրադարձությունների մասին, հայտնում է Սատտագյուտիայի Գանդատամակի (պարսկերեն տեքստի Գանդուտավան է) վայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին և վերջում ավելացնում, որ այդ էր իր կատարածը Սատտագյուտիայում և Արախոսիայում<sup>122</sup>: Բերված տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Սատտագյուտիայում Դարեհի բանակը գործել է Արախոսիային սահմանակից շրջանում և, հավանաբար, Վահյազդատայի ուղարկած բանակին հաղթելուց հետո Արախոսիան մտնում է VII սատրապության մեջ: Փաստորեն, ինչպես տեսնում ենք, չնայած Վահյազդատան Արախոսիայում և Սատտագյուտիայում պատերազմում էր Վիվանայի դեմ իր ուղարկած բանակով, այդուհանդերձ VII սատրապությունը կարելի է համարել այն սատրապություններից մեկը, որտեղ տեղական իշխանությունը, հանձին Արախոսիայի սատրապ Վիվանայի,

<sup>120</sup> Արձանագրությունում Եգիպտոսը ևս հայտարարված է ապստամբ երկիր, բայց այլ տեղեկություններ նրա մասին չունենք: Մեզ համար առավել ընդունելի է Է. Բիքերմանի կարծիքը, համաձայն որի՝ Եգիպտոսում Դարեհի կառավարման սկզբին ոչ մի ապստամբություն էլ չի եղել, եթե չհաշվենք Լիբիայի ժամանակավոր անջատումը և անկախությունը (հարցի մանրամասն քննությունը տես Մ. Ա. Դանդամասե. *Политическая история Ахеменидской державы*, с. 104-105):

<sup>121</sup> R. Kent. *Old Persian*, p. 128.

<sup>122</sup> F. Malbran-Labat. *La version akkadienne de l'inscription trilingue de Darius á Behistun*. Roma, 1994, p. 117-118.

պահպանում է հավատարմությունը Դարեհի նկատմամբ: Այսինքն՝ Դարեհը վարչական վերափոխումները նախ իրականացնում է կայսրության համեմատաբար կայուն նահանգներում՝ I-VII սատրապություններում, որից հետո ձեռնամուխ է լինում արդեն այն նահանգների վարչական վերափոխումների իրականացմանը, որոնք նրա գահակալության առաջին տարիներին դիմել էին բացահայտ զինված ապստամբության և չէին ճանաչել նրա իշխանությունը: Ապստամբ այդ երկրների մի մասն այս կամ այն վարչական փոփոխություններով մտնում են VIII-XI սատրապությունների մեջ:

Արևմուտքում ամբողջությամբ և արևելքում մասամբ վարչական վերակազմություններ կատարելուց հետո Դարեհն իր ուշադրությունը կենտրոնացնում է կայսրության կենտրոնական նահանգների վրա, որոնք խռովությունների ժամանակահատվածում կրել էին մարդկային և նյութական մեծ կորուստներ, այսինքն՝ տվյալ նահանգներում նոր խռովությունների վտանգ՝ վերափոխումների տվյալ փուլում, այլևս հնարավոր չէր, և միանգամից կազմավորվում է 4 սատրապություն: Սպասելի էր, որ այս երկրների հետ Հայաստանը ևս կենթարկվեր վարչական վերակազմության, սակայն հաջորդ երկիրը, որն իր հավատարմությունը պահպանել էր Դարեհի նկատմամբ ապստամբությունների ժամանակաշրջանում, Բակտրիան էր, որը մինչև Այգլերի երկիրը ընդգրկվեց XII սատրապության կազմի մեջ: Արդեն իսկ նկատված աշխարհագրական նմանատիպ թռիչքային փոփոխությունները ցույց են տալիս, որ պարսից արքունիքն ընդհանրապես խուսափում էր ամբողջական վարչական վերափոխումներ իրականացնել միևնույն աշխարհագրական տարածքում, և այդպիսի կտրուկ թռիչքները հանդիսանում էին ընդհանուր վարչական վերափոխումների շղթայի միջանկյալ օղակները, որոնք կայսրության տվյալ հատվածում մինչև մյուս սատրապության կամ սատրապությունների ձևավորումը անուր հիմք պետք է հանդիսանային վարչական բնույթի հետագա զործողությունների իրագործման համար: Եվ, բնականաբար, այդ ճանապարհին եղած դժվարությունները պարսից արքունիքը փորձում էր լուծել ոչ թե միանգամից և ուժերի մեծ լարումով, այլ հատված առ հատված, ինչը թույլ կտար տեղերում կայսերական քաղաքականությունն իրականացնել առավել արդյունավետ և հեռատեսորեն: Այդ իսկ պատճառով հաջորդ երկիրը, որը համառ և երկարատև դիմադրություն էր ցույց տվել Դարեհին, Հայաստանն էր, որ ենթարկվեց վարչական վերակազմության և ներառվեց XIII սատ-

րապության մեջ<sup>123</sup>: Ըստ էության պարսից արքունիքի համար Չայաստանի նշանակությունն այնքան զգալի է եղել, որ վերջինս չէր միավորվել VIII-XI սատրապությունների հետ վարչական վերակազմության նույն փուլում: XIII սատրապությանը հաջորդող XIV սատրապության կազմում հիշատակվող ուտիները թերևս կապված են Դարեհի դեմ ապստամբած երկրների հետ: Բեհիսթունի արձանագրության մեջ հիշատակված Յուստիյան, որի Թարավա քաղաքում ապստամբեց Վահյազդատան<sup>124</sup>, Յ. Սարքվարտի կողմից նույնացվել է XIV սատրապության ուտիներին<sup>125</sup>, որոնք հավանաբար Վահյազդատային օգնելու համար դուրս են բերվում Պարսքի կազմից և հարկատու դառնում: XV և XVI սատրապությունները սահմանակցել են իրար Բակտրիական սատրապությունից հյուսիս ընկած շրջանում<sup>126</sup>: XV սատրապության սակերը, հավանաբար, մասամբ կապված են Բեհիսթունի արձանագրության V սյունակում հանդես եկող սակերին<sup>127</sup>, իսկ XVI սատրապության պարթևները վրկանների հետ միասին ապստամբել են Դարեհի դեմ: Պարիկանիներից և Ասիայի եթովպացիներից կազմված XVII սատրապությունը խռովությունների ժամանակաշրջանում խաղաղ էր մնացել, և այս սատրապության ձևավորումը հող նախապատրաստեց քիչ ավելի ուշ հարևան՝ XX սատրապության կազմավորման համար: Վարչական վերափոխումների արդյունքում առաջացած XVIII և XIX սահմանային սատրապությունները ձևավորվում են Սև ծովի հարավ-արևելյան և Կովկասյան մեծ լեռնաշղթայից հարավ ընկած շրջաններում<sup>128</sup>: Հարավում հզոր և հարուստ Սատրապական

<sup>123</sup> Ե. Զերցֆելդը Չայաստանը համարում է X սատրապությունը՝ վերջինիս մեջ ընդգրկելով նաև XVIII և XIX սատրապությունների ցեղերին (տե՛ս E. Herzfeld. The Persian Empire, p. 313; R. Hewsen. The boundaries of Achaemenid «Armina».-«Revue des Études Arméniennes», t. XVII, Paris, 1983, p. 123-143):

<sup>124</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 127:

<sup>125</sup> J. Marquart. Eānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i. Berlin, 1901, S. 30. Ապստամբությանը ուտիների մասնակցության մասին տե՛ս M. A. Дандамаев. Восстание Вахыздаты.-ВДИ, 1960, №1, с. 19.

<sup>126</sup> Տե՛ս օրինակ Բ. Գ. Հարությունյան. Չայաստանի պատմության ատլաս (Ա մաս). Երևան, 2004, էջ 17:

<sup>127</sup> Մ. Դանդամանև այս սակերին նույնացնում է տիգրախատուղա սակերի հետ, սակայն կարծում է, որ Դարեհի արշավանքը պատժիչ բնույթ չի ունեցել, քանի որ նրանք մինչև Դարեհը անկախ են եղել (տե՛ս M. A. Дандамаев. Политическая история Ахеменидской державы, с. 103): Սակայն պետք է նկատի ունենալ, որ Սակա երկիրը Դարեհի կողմից հիշատակվում է ապստամբ երկրների շարքում:

<sup>128</sup> Այս սատրապությունների տեղադրության մասին մանրամասն տե՛ս Բ. Հարությունյան. Արեւմտյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ.- «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1999, թիվ 1-12; Գ. Խորիկյան. Արեւմտյան

Հայաստանի առկայությունը թույլ է տալիս պարսից արքունիքին էթնիկական առունով խայտաբղետ այդ շրջաններում միանգամից ձեռնամուխ լինել երկու սատրապությունների ձևավորմանը: Իսկ վարչական վերակառուցումների վերջին փուլում ծայր արևելքում կազմավորվում է XX՝ հնդկական սատրապությունը: Սակայն սրանով վերջանում է սոսկ սատրապական ցուցակը, որտեղ թվարկվում են 20 սատրապությունները: Իրականության մեջ գոյություն ուներ ավելի ուշ ձևավորված XXI սատրապությունը, որը սեպագիր արձանագրություններում արտացոլված է Սկուդրա, «անդրծովյան սկյութներ» և «վահանակիր հույներ» աշխարհագրական անունների տակ: Այսպիսով, առաջանում է վարչական բաժանման մի համակարգ, որի ձևավորման սկզբունքը ուղղակիորեն հիշատակում է Յերոդոտոսը: Պատմահայրը գրում է. «Յուրաքանչյուր ազգի նա (իմա՝ Դարեհ Ա-ն - Յ. Խ.) կցեց մերձակա հարևաններին և, բացի այդ, հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը»<sup>129</sup>: Ինչպես տեսնում ենք, բերված տեղեկության մեջ արտացոլված է վարչական բաժանման երկու սկզբունք: Առաջինն այն է, որ պարսից արքունիքը միևնույն ժողովրդին ընդգրկում էր ոչ թե տարբեր սատրապությունների մեջ, այլ մի քանիսին ներառնում էր մեկ վարչական միավորի մեջ: Հարկավ, ինչպես իրավացիորեն նկատվել է, սատրապությունների ստեղծումով վարչական բաժանման հիմքում դրվեց միանգամայն նոր գաղափար՝ վարչական մեկ միավորի մեջ ներառնել մի քանի երկրներ կամ ժողովուրդներ, որոնց գլուխ կանգնած պարսից սատրապը միշտ էլ կարող էր, նրանց միմյանց դեմ զրգռելով և հակադրելով, ապահովել պարսից գերիշխանությունը կամ տիրապետությունը<sup>130</sup>: Ինչ վերաբերում է երկրորդ սկզբունքին՝ «հեռավոր ազգություններին միացրեց այս կամ այն իշխանությանը», ապա այս սկզբունքի արտացոլումը Յերոդոտոսի մոտ այնքան էլ հստակ չէ: Անշուշտ, հարցի լուծման բանալին պետք է փնտրել հենց նույն սատրապությունների ցուցակում, և ըստ այդմ էլ, այս հարցում մեր պարզաբանումները այսպիսին են: Հեռավոր ազգությունները պետք է այլ կարգավիճակ ունենային, որպեսզի չհիշատակվեին հենց սատրապությունների

Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ.-«Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2, էջ 114-126; Նույնի՝ Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն). պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն. Երևան, 2007:

<sup>129</sup> Յերոդոտոս, III, 89:

<sup>130</sup> Բ. Հարությունյան. Նշվ. աշխ., էջ 50:

կազմում, մյուս ժողովուրդների հետ միասին: Իսկ միևնույն սատրապության ցեղերից մեկին փնտրել տվյալ սատրապության սահմաններից հեռու, հակասում է պարսից արքունիքի վարչական քաղաքականության սկզբունքներին, ինչպես ենթադրում է օրինակ Ի. Պյանկովը: Վերջինս IX սատրապության օրթոկորյուբանտիներին՝ հին պարսկական արձանագրությունների տիգրախառուզա սակերին, նույնացնում է դերբիկների հետ և տեղադրում Կասպից և Արալյան ծովերի միջև, իսկ XII սատրապության մեջ հիշատակվող Այգլերի երկիրն էլ նույնացնում է Պտղոմեոսի *Αὐγαλοί-ին*<sup>131</sup>, որը Բակտրիայից բաժանված էր սոգդերով<sup>132</sup>: Մեր կարծիքով, հեռավոր ազգություններն այն ժողովուրդներն էին, որոնք Դարեհին բացի հարկերից, ինչպես վկայում է Յերոդոտոսը, նաև ընծաներ էին մատուցում<sup>133</sup> և մասնակցել են Քսերքսեսի հունական արշավանքին: Եթովպացիները, կոլխերը և նրանց հարևանները, արաբները՝ որպես ծայրամասային ժողովուրդներ, այլ հարաբերություններով էին կապված Աքեմենյան Պարսկաստանի հետ, քանի որ նրանց բնակության շրջաններում պարսից իշխանությունն ավելի թույլ էր, և նշված ցեղերը ունեին որոշակի առավելություններ մյուս ժողովուրդների նկատմամբ: Չնայած այն հանգամանքին, որ նրանք ընծաներ և հարկեր էին մատուցում պարսից արքունիքին, այդուհանդերձ նրանց պարտավորությունները համեմատաբար մեղմ էին: Սակայն պետք է ասել, որ ժամանակ առ ժամանակ նրանց պարտավորությունները եղել են նույնը, ինչ որ մյուսներինը: Օրինակ՝ Քսերքսեսի ժամանակ նշված ժողովուրդները պարտադիր կերպով մասնակցել են հունական արշավանքին, ընդ որում, նրանցից կազմված զորամասերը գլխավորել են պարսից զորահրամանատարները: Հետաքրքիր է նաև, որ եթովպացիների, կոլխերի, արաբների շարքում

<sup>131</sup> Ptol. VI, 12, 4. Սակայն մասնագիտական գրականության մեջ կարծիք կա, որ խոսքը Բակտրիայի մեջ մտնող Մարգիանայի մասին է (տես F. Sarre, E. Herzfeld. *Iranische Felsreliefe*. Berlin, 1910, S. 26): Ինչևէ, «բակտրիացիներից մինչև Այգլերի» ցույց է տալիս, որ այս երկրները անմիջական հարևաններ են եղել: Եթե ինչ-որ տեղ կարծենք, որ Այգլերի երկիրը գտնվել է Մարգիանայում, ապա Մարգիանայում ապստամբությունը արյան մեջ խեղդելուց հետո Դարեհը, հավանաբար, քաղաքական նպատակներով վարչաքաղաքական կացությունը տեղում ձևավորել էր նոր, հավատարիմ ցեղի, թերևս սկյութական (հմտ. В. М. Массон. *Узл. азխ.*, էջ 149; J. Junge. *Orthokorybantioi*.-RE, Stuttgart, 1942, S. 1486), շուրջ: Չի բացառվում, որ Այգլերի երկիրը գտնվել է XII սատրապության ծայր հյուսիսում, որտեղ սկյութական տարրի առկայությունն ակնհայտ էր:

<sup>132</sup> И. В. Пьянков. «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э., с. 43-44, прим. 68.

<sup>133</sup> Յերոդոտոս, III, 97; Herodotus, III, 97; Геродот, III, 97.

հիշատակվում են Նյուսե սրբազան երկրի բնակիչները, որոնց Յերոդոտոսը տեղադրում է Յնդկաստանում, ասիական եթովպացիների երկրում<sup>134</sup>: Սակայն դատելով այն հանգամանքից, որ Նյուսեի և Եգիպտոսին սահմանակից եթովպացիներն ընծաները միասին են բերում, նշանակում է, որ Նյուսե սրբազան երկիրը նույնպես գտնվել է արևմտյան եթովպացիների երկրում<sup>135</sup>: Եթե կոլխերի պարագայում կարելի է ասել, որ միացված են եղել XIX սատրապությանը<sup>136</sup>, ապա եթովպացիները վարչական առումով, ըստ էության, միացված են եղել Եգիպտական սատրապությանը, իսկ արաբները կարող էին հանդես գալ և՛ V, և՛ IX սատրապությունների կազմում, չնայած Քսերքսեսի հունական արշավանքին արաբները և արևմտյան եթովպացիները միավորվում են մեկ հրամանատարության ներքո, ընդ որում, նրանց առաջնորդում է Արսամեսը՝ Դարեհի և Արիստոնեի՝ Կյուրոսի դստեր որդին<sup>137</sup>, ինչը, իրոք, վկայում է նրանց առանձնահատուկ կարգավիճակի մասին: Պարսկական սեպագիր աղբյուրներում եթովպիան հիշատակվում է Քուշ անվան ներքո, որը Դարեհը համարում է իր տերության երկրներից մեկը, որտեղ ձգվում էին թագավորության սահմանները, և որտեղից բերվում էր արքունիքին անհրաժեշտ փղոսկրի մի մասը<sup>138</sup>, ինչի մասին գրում է նաև Յերոդոտոսը: Յետևաբար, եթովպացիների վրա պարսիկների իշխանությունն իրական էր, քանի որ կոլխերի դեպքում էլ Յերոդոտոսը նշում է, որ պարսիկները տիրում էին մինչև Կովկաս լեռը: Ինչ վերաբերում է արաբներին, ապա նրանց մասին խոսել ենք վերևում և վերջում ավելացնենք միայն, որ իրականության մեջ կային արաբական որոշ ցեղեր, որոնց հետ պարսիկների հարաբերությունները դաշնակցային էին և այդ ցեղերը վարչական առումով ոչ մի հարաբերություն չունեին Աքեմենյան Պարսկաստանի սատրապական համակարգի հետ:

<sup>134</sup> Յերոդոտոս, III, 97; Herodotus, III 97; Геродот, III, 97.

<sup>135</sup> Հմմտ. Herodotus, III 97, ծմբ. 1, էջ 125. «Probably the mountain called Barkal in Upper Nubia; this is called "sacred" in hieroglyphic inscriptions».

<sup>136</sup> Գ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ, էջ 114-126:

<sup>137</sup> Յերոդոտոս, VII, 69:

<sup>138</sup> R. Kent. Նշվ. աշխ., էջ 136, *Dph*; 143, *DSf*.

## ԱՄՓՈՓՈՒՄ

Ի մի բերելով վերը կատարված քննության արդյունքները՝ գալիս ենք այն եզրակացության, որ Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանման համակարգի հիմքում դրված էր տարբեր ժողովուրդների միավորումով մեկ ամբողջություն՝ միություն ստեղծելու գաղափարը, որը շուրջ երկու հարյուր տարի պահպանվեց պասարգահների ցեղից սերող Աքեմենյան տոհմի գլխավորությամբ: Միևնույն ժամանակ ցույց տրվեց, որ Աքեմենյան արքաների արձանագրություններում հիշատակվող երկրները չեն արտացոլում կայսրության վարչական բաժանման համակարգը և ներկայացնում են հպատակ երկրները, չնայած որ հենց այդ երկրները կազմում էին սատրապությունները և իրենց հիշատակությամբ հիմնականում ներկայացնում են կայսրության գլխավոր կամ հիմնական ժողովուրդներին: Պարզվեց, որ վարչական առումով Աքեմենյան Պարսկաստանը բաժանված էր 21 սատրապությունների, ընդ որում, XXI՝ Սկուդրա սատրապությունը ձևավորվել էր Դարեհի կողմից համապետական վարչական վերափոխումներ ձեռնարկելուց քիչ ավելի ուշ, ըստ այդմ էլ տեղ չի գտել Յերոդոտոսի ցուցակում: Յերոդոտոսի ցուցակում սատրապությունների թվարկման հերթականությունը պայմանավորված է նրանց ձևավորման ժամանակագրական հերթականությամբ, ընդ որում, սատրապությունների ձևավորման նման ժամանակագրական պայմանականությունը բացատրվում է այն քաղաքականությամբ, որը Դարեհ Ա-ն իրականացրեց ապստամբ երկրների նկատմամբ, որպեսզի հնարավորինս կանխի հետագա խռովությունները պետության դեմ: Ուսումնասիրությունում քննության են առնված Աքեմենյան Պարսկաստանի վարչական քաղաքականության և պատմական աշխարհագրության բազմաթիվ կարևոր ու կնճռոտ հարցեր, որոնց պարզաբանումը կարևոր նշանակություն ունի ոչ միայն կայսրության, այլ նաև հպատակ ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:



# ОБ АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЛЕНИЯХ АХЕМЕНИДСКОЙ ПЕРСИИ

*Оганнес Хорикян*

## Резюме

Многосторонний анализ древних источников показывает, что в основе системы административного деления Ахеменидской Персии лежала идея создания целостности, союза путем объединения разных народов, которая почти 200 лет поддерживалась родом Ахеменидов из племени пасаргадов. В то же время показано, что упоминаемые в клинописях Ахеменидских царей страны не соответствуют административной системе империи и представляют зависимые страны, несмотря на то, что именно они составляли сатрапии и посредством их упоминаний определяются главные или основные народы империи. Анализ источников позволяет утверждать, что Ахеменидская Персия имела 21 сатрапию, при этом 21-ая - Скудра была образована Дарием I несколько позже общегосударственных административных реформ, почему и не нашла места в списке Геродота. В исследовании проанализировано множество сложных и важных вопросов, касающихся административной политики и исторической географии Ахеменидской Персии, прояснение которых имеет важное значение для исследования истории не только империи, но и зависимых народов.

# ON THE ADMINISTRATIVE DIVISIONS OF ACHAEMENIAN PERSIA

*Hovhannes Khorikyan*

## **S u m m a r y**

The comprehensive investigation of the ancient sources shows that the system of the administrative division of Achaemenian Persia was based on the idea of creating a unity, by uniting different nations and it existed for 200 years led by the Achaemenians who originated from Pasargadae tribe. At the same time it was shown that the countries mentioned in Achaemenians kings' cuneiform inscriptions were obeying countries and did not reveal the system of the administrative division of the Empire. They formed satrapies and introduced the main peoples of the Empire. It came out that on the administrative point of view Achaemenian Persia was divided to 21 satrapies. By the way the XXI satrapy - Skudra was formed by Darius I not long after the administrative changes in the Empire thus it was not included in Herodotus list. The order of the satrapies in Herodotus list is based on the chronology of their formation and this chronological convention is explained by the policy led by Darius I towards the rebelling countries to prevent further unrest against the state. Many important and wrinkled issues on the administrative policy and historical geography of Achaemenian Persia were examined in the research, the elucidation of which has an important meaning for studying the history of the Empire as well as obeying peoples.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## ա) ՍԿՁԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐ

### **Հին պարսկական.**

1. «Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը» (թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Գ. Նալբանդյանի), Երևան, 1964:
2. Хрестоматия по истории Древнего Востока (под редакцией В. В. Струве и Д. Г. Редера), Москва, 1963.
3. Kent R., Old Persian. Grammar. Texts. Lexicon, 2nd ed., New Haven, 1953.
4. «Les inscriptions de la Perse achéménide». traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Gallimard, Paris, 1997.

### **Հունա-հռոմեական.**

1. Հերոդոտոս, Պատմություն իննը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986:
2. Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:
3. Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը,-«Ալեքսանդր Մակեդոնացի», Երևան, 1987:
4. Քսենոփոն, Անաբասիս (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1970:
5. Քսենոփոն, Կյուրոպեդիա (թարգմ. և ծանոթ. Ս. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 2000:
6. Арриан, Поход Александра (перевод с древнегреческого М. Е. Сергеевского), М.-Л., 1962.
7. Геродот, История в девяти книгах (перевод и примечания Г. А. Страгановского), Л. 1972.
8. Квинт Курций Руф, История Александра Македонского, Москва, 1963.
9. Плутарх, Избранные жизнеописания, т. II, Москва, 1987.
10. Страбон, География в 17 книгах (перевод, статья и комментарии Г. А. Страгановского), Л., 1964.
11. Arrian, Anabasis Alexandri (with an English translation by E. Iliff

Robson), v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1958-1961 (Loeb Classical Library).

12. Claudii Ptolemaei Geographia, e codicibus recognovit, prolegomenis, annotatione, indicibus, tabulis instruxit Carolus Müllerus, voluminis primi. pars secunda, Parisiis, 1901.

13. Herodotus (with an English translation by A. D. Godley), v. II-III, Cambridge-Massachusetts-London, 1957 (Loeb Classical Library).

14. Plinii Secundi C, Naturalis historiae, vol. 1-10, Cambridge-Massachusetts-London, 1950-62 (Loeb Classical Library).

15. Rufus Curtius Quintius, History of Alexander (with an English transl. by John C. Rolfe), v. I-II, Cambridge-Massachusetts-London, 1956 (Loeb Classical Library).

16. The Geography of Strabo (with an English translation by H. L. Jones), In Eight Volumes, London, 1969 (Loeb Classical Library).

## **բ) գրքեր, սենագրոհթՅՈՒՆՆԵՐ**

1. Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:

2. Խորիկյան Հ., Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2007:

3. Հարությունյան Բ., Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դ.դ.), Երևան, 1998:

4. Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001:

5. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Ա մաս), Երևան, 2004:

6. Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից-VIII դարը ներառյալ), Երևան, 2006:

7. Акоюн А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

8. Дандамаев М., Иран при первых Ахеменидах (VI в. до н. э.), Москва, 1963.

9. Дандамаев М., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985.

10. Дандамаев М., Луконин В., Культура и экономика древнего Ирана, Москва, 1980.
11. Доватур А., Каллистов Д., Шишова И., Народы нашей страны в «Истории» Геродота, Москва, 1982.
12. Дьяконов И., История Мидии, М.-Л., 1956.
13. Дьяконов М., Очерк истории древнего Ирана, Москва, 1961.
14. История таджикского народа, т. I, Москва, 1963.
15. Пьянков И., Средняя Азия в известиях античного историка Ктесия (Текст, перевод, примечания), Душанбе, 1975.
16. Струве В., Эпюды по истории Северного Причерноморья, Кавказа и Средней Азии, Л., 1968.
17. Толстов С., По следам древнехорезмийской цивилизации, М.-Л., 1948.
18. Тураев Б., История древнего Востока, т. II, Л., 1935.
19. Altheim F., Weltgeschichte Asiens im griechischen Zeitalter, t. I, Halle, 1947.
20. Herzfeld E., Archaeological History of Iran, London, 1935.
21. Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968.
22. Jacoby F., Die Fragmente der griechischen Historiker, Berlin-Leiden, 1923-1958.
23. Junge J., Saka-Studien. Der ferne Nordosten im Weltbild der Antike, Leipzig, 1939.
24. Malbran-Labat F., La version akkadienne de l'inscription trilingue de Darius á Behistun, Roma, 1994.
25. Marquart J., Ērānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i, Berlin, 1901.
26. Olmstead A., History of the Persian Empire, Chicago, 1948.
27. «Pauly's Real-Encyclopädie der classischen Altertumswissenschaft», München, 1921, Stuttgart, 1942, 1958.
28. Persepolis, Takht-I-Jamshid (by Ali-Sami), 5<sup>th</sup> ed., Shiraz, 1967.
29. Posener G., La première domination Perse en Égypte, Caire, 1936.
30. Sarre F., Herzfeld E., Iranische Felsreliefe, Berlin, 1910.
31. Szemerényi O., Four Iranian ethnic names: Scythian-Skudra-Sogdian-Saka, Wien, 1980.

## գ) ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Խորհկյան Հ., Սատրապական Հայաստանի արևմտյան և հարավային սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում,-«Պատմա-բանասիրական հանդես», 2005, թիվ 3:

2. Խորհկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XI և XV սատրապությունների տեղադրության շուրջ,-ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, թիվ 1:

3. Խորհկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XIX սատրապության էթնիկական կազմի վերաբերյալ,-«Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 2:

4. Խորհկյան Հ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության մատիենների տեղադրության շուրջ,-«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVI, Երևան, 2007:

5. Խորհկյան Հ., Հերոդոտյան ասպեյրների տեղորոշման հարցի շուրջ,-Հանրապետական գիտական նստաշրջան: Նյութերի ժողովածու, Գյումրի, 2008:

6. Հարությունյան Բ., Աքեմենյան Պարսկաստանի XVIII սատրապության տեղադրության շուրջ,-«Հանդես անսորյա», Վիեննա, 1999, թիվ 1-12:

7. Պետրոսյան Ս., Հին Սարաստանի տարածքի երրորդ էթնիկական տարրի մասին,-«Պատմա-բանասիրական հանդես», 1979, թիվ 4:

8. Бернштам А., Племенные союзы на Тянь-Шане и Енисее,-В кн. История Киргизии. т. I, Фрунзе, 1956.

9. Дандамаев М., Восстание Вахьяздаты,-«Вестник древней истории», 1960, №1.

10. Массон В., Древнеземледельческая культура Маргианы,- Материалы и исследования по археологии СССР, вып. 73, М.-Л., 1959.

11. Пьянков И., К вопросу о маршруте похода Кира II на массагетов,-«Вестник древней истории», 1964, №3.

12. Пьянков И., «История Персии» Ктесия и среднеазиатские сатрапии Ахеменидов в конце V в. до н. э.,-«Вестник древней истории», 1965, №2.

13. Пьянков И., Саки (содержание понятия),-Изв. Отделения общественных наук АН ТаджССР, 1968, 3 (53).

14. Пьянков И., Массагеты Геродота,-«Вестник древней истории», 1975, №2.

15. Пьянков И., К вопросу о путях проникновения ираноязычных

племен в Переднюю Азию,-«Переднеазиатский сборник», III, Москва, 1979.

16. Balcer J., Darius' Scythian expedition,-«Harward Studies in Classical Philology», Cambridge (Mass.), 1972, vol. 76.

17. Cameron G., The Persian satrapies and related matters,-«Journal of Near Eastern Studies», v. 32, 1973, №1-2.

18. Hennig R., Der Araxes des Herodot=Wolga,-«Pettermann's Mitteilungen», 1929, II, 7/8.

19. Herzfeld E., A new inscription of Darius from Hamadan,-«Archaeological Survey of India. Memoires»,№34, Calcutta, 1928.

20. Herzfeld E., Sakastān,-«Archaeologische Mitteilungen aus Iran», 1932, IV, 1/2.

21. Hewsen R., The boundaries of Achaemenid «Armina»,-«Revue des Études Arméniennes», t. XVII, Paris, 1983.

22. Kent R., The Lists of Provinces,-«Journal of Near Eastern Studies», v. II, 1943.

23. Yoyotte J., Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte,-«Journal Asiatique», t. 260, Paris, 1972, f. 3-4.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	5
ԳԼՈՒԽ I ՍԱՏՐԱՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՐՈԴՈՏՅԱՆ ՑՈՒՑԱԿԸ.....	7
ԳԼՈՒԽ II ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.....	26
ԳԼՈՒԽ III ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԿՋԲՈՒՆՔԸ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ.....	40
ԱՄՓՈՓՈՒՄ.....	48
PEZIOME.....	49
SUMMARY.....	50
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	51



ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՄԿԱՍՏԱՆԻ  
ՎԱՐՉԱԿԱՆ  
ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ

Չափսը՝ 60X84 <sup>1</sup>/<sub>16</sub>:

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:

Ծավալը՝ 3,5 տպ. մամուլ:

Տպաքանակը՝ 200 օրինակ:

